



Ձեռնարկում եւ Վարժան Ուղեցույց

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆԸ
COVID-19-Ի ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



BDO

Երևան 2021



Գործարար համայնքի համար նախատեսված COVID-19-ի հետևանքների հաղթահարմանն ուղղված ծրագիրը նախաձեռնվել է Գործարարության աջակցման գրասենյակի կողմից՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) և Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» օժանդակությամբ: Ծրագրի շրջանակներում «Բի-Դի-Օ Ընկերայգորի» ՓԲ ընկերությունը, համաձայն կնքված խորհրդատվական ծառայության մատուցման պայմանագրի, իրականացրել է սույն վերլուծությունը:

Գործարարության աջակցման գրասենյակը դասվում է 12 ներդրումային խորհուրդների շարքին: Գրասենյակն աջակցվում է ՎԶԵԲ-ի կողմից, ֆինանսավորվելով Միացյալ Թագավորության Կառավարության «Լավ կառավարման հիմնադրամ»-ից՝ կազմելով ՎԶԵԲ-ի «Ներդրումային միջավայրի և կառավարման» նախաձեռնության մի մասը: Ներդրումային խորհուրդները կարևոր դեր ունեն իրենց երկրներում գործարար և ներդրումային միջավայրը բարելավելու մեջ՝ պետական-մասնավոր երկխոսության հարթակ տրամադրելով կառավարությանը, մասնավոր հատվածին և միջազգային հանրությանը՝ բացահայտելու բիզնեսի և ներդրողների համար հիմնական մարտահրավերները և ձևավորելու դրանց համար անհրաժեշտ բարեփոխումները: Գրասենյակը սերտորեն համագործակցում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ և կարևոր դեր է խաղում այդ թվում նաև COVID-19-ի առաջացրած էական տնտեսական վնասների հաղթահարմանն ուղղությամբ ՀՀ կառավարությանը աջակցելու գործում:

Նյութը պատրաստվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

Սույն ձեռնարկը և վարման ուղեցույցը պատրաստվել է «Բի-Դի-Օ Ընկերայգորի» ՓԲ ընկերության կողմից՝ հիմնվելով այն հրապարակման պահին գործող ՀՀ օրենսդրության կարգավորումների վրա: Սույն ձեռնարկը և վարման ուղեցույցը պետք է ծառայի բացառապես որպես ընդհանուր ուղեցույց:



1. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցումը / 3
2. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշվի բացում և հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում գրանցում / 23
3. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար գործող հարկերը և դրանց վճարման կարգը / 31
4. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ջերմոցային տնտեսության հարկային ռեժիմների ուսումնասիրությունը և դրույքաչափեր / 51
5. Հայաստանի Հանրապետությունում ջերմոցային տնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ընտրված հարկային ռեժիմների վերաբերյալ հարկային մարմինն հայտարարություն ներկայացնելը / 59
6. Հայաստանի Հանրապետությունում ջերմոցային տնտեսություն կառուցելու համար անհրաժեշտ շինարարական թույլտվությունը / 64
7. Թույլտվություն ձեռք բերելու ընթացակարգը քայլ առ քայլ՝ ներառյալ ժամկետներն ու վճարները, թույլտվություն տրամադրող իրավասու մարմինը / 64
8. Հայաստանի Հանրապետությունում ջերմոցային տնտեսություն կառուցելու համար անհրաժեշտ լիցենզիաներ / 67
9. Լիցենզիա ձեռք բերելու ընթացակարգը քայլ առ քայլ՝ ներառյալ ժամկետներն ու վճարները, լիցենզիա տրամադրող իրավասու մարմինը / 68
10. Աշխատանքային հարաբերությունները ջերմոցային տնտեսությունների համար / 72
11. Ջերմատան հիմնման գործարար ծրագրի օրինակ ներառյալ կապիտալ և գործառնական ծախսերը, ֆինանսական պլանը, կառավարչական և գործառնական բաժինները / 77

Օգտագործած տեղեկատվական աղբյուրների ցանկը / 78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Սույն ուղեցույցը ընդգրկում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ Ա/Ձ) գրանցելու՝ քայլ առ քայլ նկարագրությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանվող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով:

Ուղեցույցում ներկայացված ամբողջ տեղեկատվությունը, ներառյալ առցանց հարթակներին կատարված հղումները, դրանցում ընդգրկված գործիքները գործող է սույն ուղեցույցի պատրաստման օրվա պահին:

Իրավաբանական անձ գրանցելիս անհրաժեշտ է ընտրել կազմակերպարարական տեսակներից մեկը՝ ՍՊԸ (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն), ՓԲԸ (փակ բաժնետիրական ընկերություն), ԲԲԸ (բաց բաժնետիրական ընկերություն) և այլն:

Սույն ուղեցույցում, հաշվի առնելով այն, որ ընդհանուր ուղեցույցի նպատակը նոր ստեղծվող ընկերությունների համար պարզ ուղղորդումն է, որպես իրավաբանական անձի կազմակերպարարական տեսակ ընտրվում է ՍՊԸ-ն (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն):

Ընդ որում, ելնելով ուղեցույցի մշակման սկզբնական նպատակից, սույն ուղեցույցում՝

1. Ներկայացված են ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկված՝ իրավաբանական անձի գրանցումը կամ նրա՝ որպես անհատ ձեռնարկատեր գնացումը,
2. Ներառված չեն օտարերկրյա կամ ՀՀ իրավաբանական անձանց, ինչպես նաև օտարերկրացի ֆիզիկական անձանց մասնակցությամբ ՀՀ իրավաբանական անձ ստեղծելու կամ օտարերկրացու կողմից որպես Ա/Ձ գրանցվելու դեպքերը:

Իրավաբանական անձի գրանցումը հնարավոր է էլեկտրոնային՝ առցանց եղանակով՝ www.e-register.am կայքի միջոցով, կամ ոչ էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում (այսուհետ՝ պետ. ռեգիստր):

Ընկերության պետական ռեգիստրի գործակալությունում գրանցման ժամանակ անմիջականորեն կարգավորվում են նաև ֆիրմային անվանում ստանալու և Հարկ վճարողի հաշվառման համար ստանալու (ներառյալ ԱԱՀ վճարող հանդիսանալու ռեժիմ ընտրելու) հարցերը:

1. Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման գործընթացը:

Իրավաբանական անձի (այսուհետ՝ ընկերություն) էլեկտրոնային գրանցումը տեղի է ունենում www.e-register.am կայքի միջոցով:

1.1. Ընկերության էլեկտրոնային գրանցման նախապատրաստական փուլը

Մինչև գրանցման բուն գործընթացին անդրադառնալը, հարկ է նշել, որ ընկերության էլեկտրոնային գրանցման ստորև նշված քայլերը ամբողջությամբ իրականացնելու համար պարտադիր է ունենալ/ ձեռք բերել նույնականացման քարտ, այսուհետ նաև՝ Ն/ք (ձեռքբերման գործընթացը ստորև՝ «Նույնականացման քարտի ձեռքբերումը» պարագրաֆում), էլեկտրոնային ստորագրություն (ձեռքբերման գործընթացը www.ekeng.am կայքում և սույն Ուղեցույցի 2-րդ բաժնում), համապատասխանաբար էլեկտրոնային ստորագրությունը կիրառելու նպատակով նաև նույնականացման քարտ ընթերցող սարք (ձեռքբերման գործընթացը www.ekeng.am կայքում և սույն Ուղեցույցի 2-րդ բաժնում):



Նշում: մի քանի հիմնադիր ունենալու դեպքում, անհրաժեշտ է, որպեսզի բոլոր հիմնադիրները ունենան նույնականացման քարտ, էլեկտրոնային ստորագրություն:

Նույնականացման քարտը կիրառելու համար անհրաժեշտ է օգտագործել քարտի համապատասխան PIN/PUK կոդերը: Եթե պահպանված չեն նշված կոդերը, ապա անհրաժեշտ

է վերաթողարկել նույնականացման քարտը և կրկին ձեռք բերել նշված համապատասխան կոդերը: Այդ գործընթացը իրականացնելու համար անհրաժեշտ է մոտենալ ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության հաշվառման վայրի տարածքային բաժին (հասցեները ստորև՝ «նույնականացման քարտի ձեռքբերումը» պարագրաֆում, յուրաքանչյուր բաժնի աշխատանքային ժամերը անհրաժեշտ է ճշտել նախապես):

Նույնականացման քարտի ձեռքբերումը:

Մինչև գրանցման բուն գործընթացին անդրադառնալը, հարկ է նշել, որ ընկերության էլեկտրոնային գրանցման ստորև նշված քայլերը ամբողջությամբ իրականացնելու համար պարտադիր է ունենալ/ ձեռք բերել նույնականացման քարտ, այսուհետ նաև՝ Ն/ք (ձեռքբերման գործընթացը ստորև՝ «Նույնականացման քարտի ձեռքբերումը» պարագրաֆում), էլեկտրոնային ստորագրություն (ձեռքբերման գործընթացը www.ekeng.am կայքում և սույն Ուղեցույցի 2-րդ բաժնում), համապատասխանաբար էլեկտրոնային ստորագրությունը կիրառելու նպատակով նաև նույնականացման քարտ ընթերցող սարք (ձեռքբերման գործընթացը www.ekeng.am կայքում և սույն Ուղեցույցի 2-րդ բաժնում):

Նույնականացման քարտ ձեռք բերելու համար ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն (Երևան քաղաքի տարածքային բաժիններ և մարզային բաժիններ) անհրաժեշտ է ներկայացնել՝

1. Դիմում՝ ձևը տրամադրում են Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում,
2. Անձնագիր կամ ծննդյան վկայական
3. Պետական տուրքի վճարման անդորրագիր (վճարումը հնարավոր է կատարել տեղում՝ տերմինալով): Պետական տուրքի գումարը կազմում է 3000 ՀՀ դրամ:
4. Արական սեռի ներկայացուցիչների դեպքում զինվորական գրքույկը կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ:

Նույնականացման քարտը տրվում է վերոնշյալ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Լրացուցիչ վճարի դեպքում 15 աշխատանքային օրվա ժամանակահատվածը կարող է կրճատվել մինչև հետևյալ ժամկետները՝

- 1 աշխատանքային օր՝ 20 000 ՀՀ դրամ
- 3 աշխատանքային օր՝ 10 000 ՀՀ դրամ
- 5 աշխատանքային օր՝ 5 000 ՀՀ դրամ:

Ինչպես արդեն նշվել է, նույնականացման քարտը ստանալիս, անհրաժեշտ է վերցնել PIN/PUK կոդերը՝ նույնականացման քարտը և էլեկտրոնային ստորագրությունը ակտիվացնելու համար:

***Նշում:** Նույնականացման քարտ ընթերցող սարք ձեռք բերելու, էլեկտրոնային ստորագրությունը ակտիվացնելու, էլեկտրոնային ստորագրությունը օգտագործելու, PDF ֆայլերը ստորագրելու գործընթացերը նկարագրված են սույն Ուղեցույցի 2-րդ բաժնում:

Մուտք Ընկերությունների գրանցման էլեկտրոնային ռեգիստր

Ընկերությունը էլեկտրոնային գրանցելու, տեղեկատվական համակարգից (այսուհետ՝ համակարգ) օգտվելու համար անհրաժեշտ է այցելել www.e-register.am կայքը, այցելել դրա՝ «գրանցել նոր ձեռնարկություն» բաժինը և իրականացնել ներքոնշյալ բոլոր քայլերը ըստ նկարագրված հերթականության:

Մուտք ընկերությունների գրանցման էլեկտրոնային ռեգիստր

Ընկերությունը էլեկտրոնային գրանցելու, տեղեկատվական համակարգից (այսուհետ՝ համակարգ) օգտվելու համար անհրաժեշտ է այցելել www.e-register.am կայքը, այցելել դրա՝ «գրանցել նոր ձեռնարկություն» բաժինը և իրականացնել ներքոնշյալ բոլոր քայլերը ըստ նկարագրված հերթականության: Համակարգը շահագործելու համար անհրաժեշտ է գրանցվել որպես օգտվող: Այցելելով «Գրանցվել» բաժին անհրաժեշտ է տրամադրել գործող էլեկտրոնային փոստի հասցե և նշանակել համակարգ մուտք գործելու գաղտնաբառ: Գրանցվելուց հետո նշված էլեկտրոնային փոստին ուղարկվում է ակտիվացման հղումով նամակ և այդպիսով ավարտվում է գրանցումը համակարգում որպես օգտվող:

Գրանցումը ավարտելուց հետո անհրաժեշտ է մուտք գործել համակարգ և «Անձնական տիրույթ»-ի «Իմ տվյալները» բաժնում լրացնել այն անձի տվյալները, ով լրացնելու է ընկերության գրանցման հայտը՝ գործադիր մարմնի ղեկավարը կամ հիմնադիրներից մեկը:

Նշում: որպես անձնագրի սերիա և համար խորհուրդ է տրվում լրացնել նույնականացման քարտի համարը, որպեսզի էլեկտրոնային ստորագրությունը ակտիվացնելիս համակարգը հեշտությամբ նույնականացնի տվյալները:

«Իմ տվյալները» բաժինը լրացնելուց հետո անհրաժեշտ է աջ վերևի անկյունում երևացող «Ելք համակարգից» հրամանի միջոցով դուրս գալ համակարգից, համակարգչին միացնել Ն/Ք կարդացող սարքը Ն/Ք-ի հետ և սեղմել «Մուտք ID քարտով» կոճակը, քանի որ գրանցման որոշակի փուլում անհրաժեշտ է լինելու կիրառել էլեկտրոնային ստորագրությունը: Համակարգ մուտք գործելուն պես անհրաժեշտ է սեղմել «Նոր ընկերություն» կոճակը և ընտրել իրավաբանական անձի կազմակերպարարական ձևը (հիշեցնենք, որ սույն ուղեցույցում պարզաբանումները տրվում են ՍՊԸ տեսակի համար):

1.2. Ընկերության էլեկտրոնային գրանցման բուն գործընթացը

Քայլ 1: Հայտ ներկայացնողի տվյալները

Ընկերության էլեկտրոնային գրանցման հայտը ներկայացնում է ընկերության հիմնադիրը կամ գործադիր մարմնի ղեկավարը: Անհրաժեշտ է լրացնել համապատասխան անձի տվյալները (անուն, ազգանուն, հասցե՝ բնակության կամ հաշվառման (ըստ օրենսդրության, եթե հաշվառման և բնակության հասցեները տարբերվում են, ապա երկուսն էլ անհրաժեշտ է լրացնել, սակայն քանի որ էլեկտրոնային համակարգը ճկուն չէ և ընտրության իրավունք չի տալիս, ապա հասցեն անհրաժեշտ է լրացնել ըստ հայեցողության), քաղաքացիություն, անձնագրային տվյալներ, հանրային ծառայությունների համարանիշը ¹ (այսուհետ՝ ՀԾՀ) առկայության դեպքում կամ ՀԾՀ-ից հրաժարվելու մասին նշում և այլն), որոնք պատկերված են ստորև նկարում: Այնուհետև «Պահպանել/Հաջորդ» կոճակը սեղմելու միջոցով անցնել հաջորդ քայլին:

1

Նախկինում Հանրային ծառայությունների համարանիշը կոչվում էր սոցիալական ապահովության քարտ: Սա նույնն է և ունի նույնական կիրառություն: Եթե անձը միայն անձնագրով է հանդես գալիս, ապա առանձին ՀԾՀ է անհրաժեշտ ներկայացնել: Եթե Ն/Ք-ով է հանդես գալիս, ապա դրա կարիքը չկա, քանի որ Ն.Ք-ի ետնամասում նշված է արդեն ՀԾՀ-ի համարը:



Հայտը ներկայացնողի տվյալները

Խնդրում ենք լրացնել հայտը ներկայացնողի տվյալները: Սպասարկման թիվը խնդրում է չփոփոխել բեռնված տվյալները, եթե չեք նշելու այլ հասցե, քան բեռնվել է:

Հայտ + Նոր - ԱՊՀ

Հայտը ներկայացնում եմ որպես

- ☒ Հայտատու
- ☐ Գլխավոր
- ☐ Գործառնոր մարմնի ղեկավար

Ազգանուն (հայերեն) *

Հաշվանուն (հայերեն) *

Ճեկոյան թիվ SS55-ԱԱ-00 *

Սեռ *

Քաղաքացիություն *

Անձնագրի սերիան եւ համարը *

Ուժ կողմից է տրված *

Երբ է տրված (օրինակ. 2011-03-25) SS55-ԱԱ-00 *

Հանրային ծառայությունների համարանիշ *

Երկիր *

Մարզ/Նահանգ *

Մարզ/Նահանգ *

Համայնք/Կաղ: շրջան *

Համայնք/Կաղ: շրջան *

Քաղաք/գյուղ *

Քաղաք/գյուղ *

Փողոց *

Տան տնասկ *

Ընեք *

Քայլ 2: Ընկերության ֆիրմային անվանումը

Այս քայլը իրականացնելիս անհրաժեշտ է մուտքագրել ընկերության նախընտրելի անվանումը՝ հայերեն լեզվով, ցանկության դեպքում նաև՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ֆիրմային անվանումը մուտքագրելուց հետո, համակարգում ինքնաշխատ կերպով ստուգվում է ֆիրմային անվանումը գրանցելը մերժելու հիմքերի առկայությունը, ինչպես նաև մուտքագրված ֆիրմային անվանումը համադրվում է ՀՀ-ում գրանցված ֆիրմային անվանումների հետ:

Անվանում

Անվանումը (հայերեն) *

Անվանումը (Անգլերեն) *

Անվանումը (Ռուսերեն) *

Ստուգել անվանումը

Առանձնահատկություններ. Ֆիրմային անվանումը չպետք է նույնական լինի այլ ընկերության ֆիրմային անվանման հետ, չպետք է նույնական լինի կամ ամբողջությամբ ներառի ՀՀ պետական կառավարման մարմինների անվանումներին, չպետք է պարունակի վիրավորական անվանումներ և այլն, չպետք է վերարտադրի ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան պահպանվող միջազգային կազմակերպությունների լրիվ կամ կրճատ անվանումը:

Եթե նշված հիմքերից որևէ մեկը առկա է, ապա անհրաժեշտ է փոխել ընկերության ֆիրմային անվանումը և մուտքագրել նորը: Ֆիրմային անվանումը պետք է պարունակի բուն անվանումը և ՍՊԸ արտահայտությունը:

«Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման մեջ օգտագործելու համար վճարվում է տարեկան պետական տուրք: Դրա չափը կազմում է բազային տուրքի 600-պատիկի չափը:

Ընդ որում պետական տուրքը անհրաժեշտ է վճարել նախապես: Ֆիզիկապես բանկում փոխանցում կատարելու կամ հետևյալ հաշվեհամարին առցանց (online banking համակարգի կիրառմամբ) փոխանցելու միջոցով՝ 900005160776: Վերը նշված վճարման երկու եղանակների դեպքում էլ վճարման անդորրագրի վրա պետք է պարտադիր երևա բանկի բնօրինակ (լուսապատճենված) կնիքը: Վճարման անդորրագիրը կարիք կլինի կցել «Քայլ 9»-ում՝ «Անհրաժեշտ փաստաթղթեր», բաժնում՝ մնացած փաստաթղթերի հետ: Ֆիրմային անվանումը մուտքագրելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը:

Քայլ 3: Ընկերության իրավաբանական/գտնվելու հասցեն

Այս հատվածում առկա են 2 տարբերակ՝ «Ընտրեք կցվող կանոնադրությունը» և «Իրավաբանական հասցե» տարբերակները: Առաջին դեպքում հնարավոր տարբերակներից անհրաժեշտ է ընտրել «Ստանդարտ կանոնադրություն» տարբերակը:

Նշում. այս պահին գործող կարգն այն է, որ ընկերության էլեկտրոնային գրանցում հնարավոր է, եթե հիմնադիրը (հիմնադիրները) համաձայն են գործունեության ծավալել՝ հիմնվելով պարզ, ստանդարտ կանոնադրության վրա: Այն դեպքում, երբ ստանդարտ կանոնադրությունը չի բավարարում հիմնադիրներին, ապա ընկերության պետական գրանցումը պետք է իրականացվի թղթային ֆորմատով: Թղթային ֆորմատով ընկերությունը գրանցելու քայլերը ներկայացված են սույն բաժնի 2-րդ Մասում:

Երկրորդ հատվածում անհրաժեշտ է լրացնել ընկերության իրավաբանական/գտնվելու հասցեն:

Ընկերության իրավաբանական/գտնվելու հասցեն կարող է լինել ցանկացած հասցե, այդ թվում հիմնադիր ֆիզիկական անձանցից մեկի հաշվառման կամ բնակության հասցեն: Նույն հասցեն նշվում է նաև հարկային տեսչությունում, որպես հաշվառման հասցե: Իրավաբանական/գտնվելու հասցեն և գործունեության վայրի հասցեն կարող են տարբերվել: Հաջորդ քայլին անցնելու համար անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը:

Քայլ 1
Քայլ 2
Քայլ 3
Քայլ 4
Քայլ 5
Քայլ 6
Քայլ 7
Քայլ 8
Քայլ 9
Քայլ 10

Տվյալներ գտնվելու վայրի վերաբերյալ

Հարգելի ազնվու, խնդրում ենք լրացնել գտնվելու վայրի հասցեն: Ուշադրություն դարձրեք, որ նշված հասցեն նաև հանդիսանում է համապատասխան հարկային տեսչությունում հաշվառման հասցեն:

Հայտ + Վոր - ԱԳԸ

Ընտրեք կցվող կանոնադրության տարբերակը

Ստանդարտ կանոնադրություն

Տեսնել ստանդարտ կանոնադրության նմուշը  **Դիտել**

Իրավաբանական հասցե

Մարզ/նահանգ		Փոստային դասիչ	
Համայնք/վարչ. շրջան		Հասցե	
Քաղաք/գյուղ		Օռնախոս +374	
Փողոց		Բջջային +374	
Տան տեսակ		Էլ. փոստ	
Ենթ			
Քնակաբան/սենյակ			

Հիմնադրման ամսաթիվ

Պահպանել/Հաջորդ

Քայլ 4: Ընկերության գործունեության վայրը և տեսակները

Այս փուլում ընտրվում է տնտեսական գործունեության համապատասխան դասակարգումը և լրացվում է գործունեության իրականացման փաստացի վայրի հասցեն (առկայության դեպքում):

Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ): Համակարգը ներկայացնում է նաև ԱԱՀ վճարող հանդիսանալու դաշտ: Եթե կանխավ գործադիր տնօրենի (հիմնադիրի) կողմից որոշված է, որ ընկերությունը ԱԱՀ վճարող է հանդիսանալու, ապա այդ դաշտում անհրաժեշտ է նշել «Այո», հակառակ դեպքում՝ «Ոչ»: ԱԱՀ մասին կարգավորումները տես սույն Ուղեցույցի 3-րդ բաժնում:

Տվյալներ գործունեության վաճառքի ու տեսակների վերաբերյալ

Խնդրում ենք լրացնել գործունեության իրականացման փաստացի վայրի հասցեն (առկայության դեպքում) և ընտրել տնտեսական գործունեության համապատասխան դասակարգիչը:

Ընտրել տնտեսական գործունեության դասակարգիչ

Browse *

ԱԱՀ վճարող *

Գործունեության հասցե (վերցված է «Իրավաբանական տվյալներ» բաժնից)

Մարզ/նահանգ *

Համայնք/հարզ շրջան *

Քաղաք/գյուղ *

Փոփոց *

Տան տեսակ *

Շենք *

Քնակարան/սենյակ

Փոստային դասիչ *

Հասցե

Հեռախոս +374 *

Քլեքային +374

Էլ. փոստ

Կայք

Պահպանել/Ցածկող

Տնտեսական գործունեության դասակարգիչ²: Սեղմելով «Browse» կոճակը համակարգը հնարավորություն է տալիս ընտրելու տնտեսական գործունեության դասակարգչի կոդը:

Սեղմելով «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» կոճակը, համակարգը կցուցադրի 3 տարբերակ, ինչպես պատկերված է ներքևի նկարում, որտեղից էլ անհրաժեշտ է ընտրել դասակարգչի համապատասխան կոդը: (Տնտեսական գործունեության դասակարգիչների մասին ավելի մանրամասն տե՛ս սույն Ուղեցույցի 3-րդ բաժնում)

Տնտեսական գործունեության դասակարգիչ

Որոնել

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՎՈՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Այս բաժինն ընդգրկում է քաղաքական և կենտանական բնական աղբյուրների շահագործումը: Բաժինը ներառում է վայելարության շահագործումը, անտառաբուծությունը, անտառային տնտեսությունը, այլ բույսերի և կենդանիների բուծումը գյուղատնտեսական տնտեսություններում կամ քաղաքի հսկայաց և կենդանիների որսը բնական միջավայրում:

2

Նշված դասակարգիչներով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների անվանումները համապատասխան կոդերով: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչները նախասահմանված են վիճակագրության նպատակներով օգտագործելու համար:

Նոր հիմնադրի տվյալները լրացվում են ինչպես պատկերված է նկարում.

լրացվում են բոլոր «Պարտադիր» դաշտերը՝ անուն, ազգանուն, հաշվառման կամ բնակության հասցեներ, քաղաքացիություն, անձնագրային տվյալներ և այլն և «ոչ պարտադիր» դաշտերը՝ ցանկության դեպքում՝ ՀԾՀ, էլ. փոստի հասցե և այլն:

Հայտ + -եր- ՍՊԸ

Անուն (հայերեն) * Ազգանուն (հայերեն) * Հայրանուն (հայերեն) Ծննդյան թիվ 5555-ԱԱ-ՕՕ * Սեռ * Քաղաքացիություն * Անձնագրի սերիալ և համարը * Ում կողմից է տրված Երբ է տրված (օրինակ. 2011-03-25) 5555-ԱԱ-ՕՕ Հանրապետության ծառայությունների համարանիշ Հրաժարվել է Հանրապետության ծառայությունների համարանիշից Ոչ	Երկիր * Մարզ/նահանգ * Մարզ/նահանգ * Գամայնը/Կառը. շրջան * Գամայնը/Կառը. շրջան * Քաղաք/գյուղ * Քաղաք/գյուղ * Փողոց * Տան տեսակ * Հենք * Բնակարան/տեղակ Փոստային դասիչ * Հասցե Ուղևոր * Բջջային Էլ. փոստ
---	--

Անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը և անցել հաջորդ քայլին:

Քայլ 6: Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալի նվազագույն սահման ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, մինչև ժամանակ էլեկտրոնային համակարգում գրոյական թիվ հնարավոր չէ նշել: Կանոնադրական կապիտալի չափը լրացվում է ըստ հիմնադիրների (հիմնադրի) հայեցողության՝ կարմիրով նշված դաշտում (թիվը նշված է որպես օրինակ խաղարկելու համար):

Քանի որ նախկին քայլերում արդեն հիմնադիրների մասին նշում կատարվել է, ապա այս փուլում հիմնադիրների անունները կերևան ինքնաշխատ կերպով:

Էլեկտրոնային Ռեգիստր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԹՅՈՒՆ

Միջոց: Նորիստ Հայրի կորպորատիվ: Վրտնաձ: Ուրեղող: Ճանաչման փոխադր:

Բաժնի 1 Բաժնի 2 Բաժնի 3 Բաժնի 4 Բաժնի 5 Բաժնի 6 Բաժնի 7 Բաժնի 8 Բաժնի 9 Բաժնի 10

Կանոնադրական կապիտալի նշանակում

Նկար - ՍՊԸ

Կանոնադրական կապիտալ ՀՀ դրամով

Հիմնադիրներ

Անուն ազգանուն	Բաժնեմասի չափը տոկոսով	Բաժնեմասի չափը կոտորակով	Բաժնեմասի արժեքը ՀՀ դրամով	Բաժնեմասի քանակություն
 [Redacted]	100	1 / 1	20000	1
Ճանաչման փոխադրական քանակություն				1
Բաժնեմաս	100	1 / 1	20000	1

Պահպանել/Հաջորդ

Գումարը նշելու հետո պետք է նշել նաև, թե ինչպես է այն բաշխված հիմնադիրների միջև լրացնելով՝ «բաժնեմասի չափը տոկոսով», «բաժնեմասի չափը կոտորակով», «բաժնեմասի արժեքը ՀՀ դրամով» բաժինները: Մյուս բաժինները ավտոմատ կերպով կլրացվեն: Այնուհետև անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ կոճակը»:

Քայլ 7: Գործադիր մարմնի վերաբերյալ տվյալները

«Գործադիր մարմնի տեսակ» բաժնում ընտրվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ տարբերակը³: Եթե «Քայլ 1»-ում նշվել է, որ հայտը ներկայացվում է որպես «Գործադիր մարմին», ապա համակարգը ինքաշխատ կերպով այս քայլում արդեն լրացնում է գործադիր մարմնի տվյալները:

Նշում. չնայած, որ համակարգը վերոնշյալ երկու տարբերակներն է առաջարկում գործադիր մարմնի ղեկավարի տեսակի համար, այնուամենայնիվ համակարգը այդչափ ճկուն չէ, որպեսզի լրացվեն իրավաբանական անձ գործադիր մարմնի տվյալները: Այսպիսով այդ դեպքում, այսինքն եթե ՍՊԸ-ի գործադիր տնօրենի գործառույթները արտահանված են այլ իրավաբանական անձի, ապա անհրաժեշտ է կրկին փաստաթղթերը ներկայացնել թղթային կրիչի վրա:

«Պաշտոն» բաժնում՝ տնօրեն, գլխավոր տնօրեն կամ գործադիր տնօրեն և այլն՝ բոլոր այն տարբերակներից, որոնք առաջարկում է համակարգը ցուցակով:

Ֆիզիկական անձ գործադիր մարմնի դեպքում լրացվում են բոլոր «պարտադիր» նշումով դաշտերը՝ անուն, ազգանուն, սեռ, հասցե՝ բնակության կամ հաշվառման, քաղաքացիություն, անձնագրային տվյալներ և այլն: Բոլոր «ոչ պարտադիր» դաշտերը լրացվում են ցանկության դեպքում՝ ՀՇՀ, էլ. հասցե և այլն:

Այնուհետև անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը:

3

Ընկերության գործադիր մարմինը հիմնական դեպքերում անվանվում է տնօրեն, գործադիր տնօրեն և այլն: «Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն գործադիր մարմնի լիազորությունները կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության, օրինակ մեկ այլ ՍՊԸ-ի:

Գործադիր մարմնի տեսակ

Պաշտոնը

Անուն (հայերեն)

Երկիր

Ազգանուն (հայերեն)

Մայրուղ/Նահանգ

Հայրանուն (հայերեն)

Համայնք/Կարգ. շրջան

Ճննդյան թիվ

Քաղաք/գյուղ

Սեռ

Փողոց

Քաղաքացիություն

Տան տեսակ

Անձնագրի սերիալի և համարը

Շենք

Ուժ կողմից է տրված

Բնակարան/աննյակ

Երբ է տրված (օրինակ. 2011-03-25)

Փոստային դասիչ

Հանրային ծառայությունների համարանիշ

Հասցե

Հրաժարվել է Հանրային ծառայությունների համարանիշից ☐

Ծնախոս

Բջջային

Էլ. փոստ

Պահպանել/Հաջորդ

Քայլ 8: Էլեկտրոնային ստորագրություն

Այս քայլը իրականացնելու համար անհրաժեշտ է էլեկտրոնային կարգով ստորագրել դիմումն ու կանոնադրությունը:

Էլեկտրոնային ստորագրությունների բաժին: Եթե դեռևս չունեք էլեկտրոնային ստորագրություն, սեղմեք «Հաջորդ» կոճակը:

Հարգելի այցելու, եթե Ղուգ փազրվածեք կատարել տվյալ փոփոխությունը եւ ունեք ՀՀ էլեկտրոնային նախարարության կողմից հավաստագրված ընկերության թողարկած էլեկտրոնային ստորագրություն, ապա կարող եք էլեկտրոնային ստորագրել Ձեր դիմումը եւ կատարել փոփոխությունը առցանց:

Ստորագրելու համար ներբեռնեք ներդրուչյալ առցանց հայտը Ձեր համակարգիչ. ստորագրեք այն եւ կցեք դիմումին:

Էլեկտրոնային ստորագրությունները տրամադրվում են ՀՀ էլեկտրոնային նախարարության կողմից հավաստագրված ԷԿԵԼԳ ՔԲԸ-ի կողմից:

Դիմում

Կանոնադրություն

Դիմում No file chosen

Կանոնադրություն No file chosen

Ստորագրել

Պահպանել/Հաջորդ

Պետք է հաշվի առնել այն, որ անկախ այն հանգամանքից, թե ով է հայտը լրացնող անձը, դիմումը պետք է ստորագրի ընկերության գործադիր մարմնի ղեկավարը:

Այս փուլում հնարավոր է տեսնել կանոնադրության ամբողջական տարբերակը, որը ինքնաշխատ կերպով կառուցվել է՝ նախորդ քայլերում լրացված տվյալների հիման վրա: Այնուամենայնիվ, եթե այդ փուլում ցանկություն կառաջանա կանոնադրության մեջ հավելյալ այլ տվյալ ավելացնել, օրինակ գործունեության տեսակի մասին, ապա անհրաժեշտ է ընկերության գրանցման փաստաթղթերը հանձնել թղթային կրիչի վրա՝ սույն բաժնի ՄԱՍ 2-ում ներկայացված գործընթացին համապատասխան:

Անհրաժեշտ է ներբեռնել Դիմումը և կանոնադրությունը (PDF ֆորմատով են), այնուհետև ըստ հերթականության մի քանի հիմնադիրների առկայության դեպքում կանոնադրության վերջին էջին անհրաժեշտ է դնել բոլոր հիմնադիրների էլեկտրոնային ստորագրությունները, իսկ առաջին էջին՝ գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային ստորագրությունը: Վերջում՝ անհրաժեշտ է ստորագրված դիմումը և կանոնադրությունը բեռնել կայք:

Նշում: եթե դեռևս առկա չէ «էլեկտրոնային ստորագրություն», ապա «Հաջորդ» կոճակը սեղմելուց հետո անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում անձը հաստատող փաստաթուղթը այցելել պեյք. ռեգիստր և ստորագրել անձամբ դիմումի և կանոնադրության թղթային տարբերակները:

«Ստուգել» կոճակի միջոցով հնարավոր է կրկին ստուգել տվյալների ճշգրտությունը, այնուհետև սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը:


Քայլ 9: Անհրաժեշտ (պարտադիր) փաստաթղթերի բաժին

Համակարգի այս բաժնում կցվում են պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ ի լրումն նախորդ քայլում արդեն իսկ կցված դիմումի և կանոնադրության:

Կախված ընտրված գործողությունից, «Լրացուցիչ փաստաթղթեր» բաժնում համակարգը ներկայացնում է ցանկ, որտեղ ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթի ընտրանուց կարելի է ընտրել նախընտրած տարբերակը:

Ընտրված յուրաքանչյուր փաստաթղթի տեսակին համապատասխան անհրաժեշտ է նաև կցել PDF ֆորմատով ընտրված փաստաթուղթը, այնուհետև սեղմել «Կցել» կոճակը: Ներքևի ձախ անկյունում համակարգը ստեղծում է նոր «կցված փաստաթղթեր» բաժինը: Յուրաքանչյուր փաստաթուղթը անհրաժեշտ է կցել վերոնշյալ գործընթացին համապատասխան:

Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը կցելուց հետո, անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը:



Առանձնահատկություն. Պարտադիր փաստաթղթերը իրենց մեջ ներառում են վերոնշյալ նկարում «կարմիրով» ընդգծված փաստաթղթերը (Որոշման և Իրական շահառուի հայտարարության մասին ավելի մանրամասն նշված է սույն բաժնի ՄԱՍ 2-ում՝ պարագրաֆ 2.2-ի 2.2.5 կետում):

Բոլոր նշված փաստաթղթերը պետք է լինեն PDF ֆորմատով և ունենան էլեկտրոնային ստորագրություն(ներ): Սա նշանակում է, որ թղթային կրիչից լուսապատճենված տարբերակը չի կարելի կցել:

Որպես «հավաստող փաստաթուղթ» անհրաժեշտ է կցել, ֆիրմային անվանման համար «Քայլ-2» ում նկարագրված դեպքում, պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Քայլ 10: Տվյալների ստուգում

Մինչև հայտի ամբողջական հանձնումը, նպատակահարմար է ևս մեկ անգամ ստուգել լրացված տվյալների ճշտությունը:

Այսպիսով, «Քայլ 10»-ում համակարգը սպառիչ ներկայացնում է բոլոր այն տվյալները, որոնք լրացվել են, ըստ բաժինների՝ իրավաբանական անձի տվյալները, իրավաբանական հասցեն, մասնակիցների տվյալները, գործադիր մարմնի ղեկավարի տվյալները, գործունեության հասցեն և կցված փաստաթղթերը:

Որևէ բաժնում սխալ հայտնաբերելու դեպքում, հնարավոր է վերադառնալ տվյալ բաժինը՝ սեղմելով այն «Քայլ»-ի կոճակը, որտեղ կա սխալ: Բացի այդ, հնարավոր է համակարգից ստանալ նաև ծանուցում՝ հայտում առկա սխալների մասին (տե՛ս օրինակը նկարում):

Քայլ 1 Քայլ 2 Քայլ 3 Քայլ 4 Քայլ 5 Քայլ 6 Քայլ 7 Քայլ 8 Քայլ 9 Քայլ 10

Տվյալների ստուգում

Հարգելի ազնվու, միևնույն պնդումները վճարելի ու հայտը հանձնելը խնդրում ենք ես մեկ անգամ ստուգել լրացված տվյալների ճշտությունը: Որևէ բաժնում սխալ հայտնաբերելու դեպքում կարող եք վերադառնալ տվյալ բաժինը՝ սեղմելով համապատասխան «Քայլ» հղումը:

Հայտն ամբողջական չէ: Ուշադրություն դարձրե՛ք ստորև ցուցադրվող ծանուցումներին:

- Հարաբերական տվյալները լրացված չեն
- Հիմնադրության անձնանունը ընտրված չէ
- Կանոնադրությունը նշանակված չէ
- Ըրափառանկան տվյալները լրացված չեն
- Հիմնադրողների տեղադրությունը լրացված չեն
- Հիմնադրողների բաժնեմասերը նշանակված չեն
- Գործադիր մարմնի ղեկավարի տվյալները լրացված չեն
- Գործունեության հետ կապված տվյալները լրացված չեն

Եթե հայտում սխալներ առկա չեն, ապա էջի ներքևում «Հավաստող բաժին» մասում անհրաժեշտ է ընտրել «գրանցումների բաժին»-ը և սեղմել «Հանձնել հայտը»:

Գրանցումը կատարվում է երկու աշխատանքային օրում: Ընկերության փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում գործակալությունում համակարգի միջոցով ընկերությունը գրանցվում է: Համակարգը գրանցվող ընկերությանը ինքնաշխատ կերպով շնորհում է գրանցման համարը, հարկային մարմնի տրամադրած՝ հարկ վճարողի հաշվառման համարը և սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համարը:

Ընկերության գրանցման մասին տեղեկանալու համար անհրաժեշտ է կրկին մուտք գործել համակարգ, որտեղ՝ «Անձնական տիրույթ» հատվածում համապատասխան ծանուցմամբ նշվում է, որ ընկերությունը գրանցվել է (նշվում է ընկերության անվանումը, դիմացը՝ «գրանցված է» արտահայտությունը) :

Համակարգը հնարավորություն է տալիս ընկերության անվանման վրա սեղմելով ստանալ՝ ներբեռնել ընկերության կանոնադրությունը և իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը: Նշված փաստաթղթերը անհրաժեշտ է տպել 1 կամ 2 օրինակ: Կանոնադրության առաջին էջին՝ տիտղոսաթերթի վրա կերևա պետ. ռեգիստրի կողմից դրված էլեկտրոնային կնիքը: Ըստ անհրաժեշտության ընկերության հիմնադիր փաստաթղթերի թղթային տարբերակները ձեռքի տակ ունենալու, այլ անձանց ներկայացնելու և այլն համար տպելուց հետո անհրաժեշտ է «Տնօրեն» կամ Գործադիր մարմնի ղեկավարի այլ նախընտրելի անվանման հատվածում, ինչպես նաև վերջին էջին առկա «Հիմնադիր(ներ)/մասնակից(ներ)» հատվածում համապատասխանաբար ապահովել նշված անձանց ստորագրությունը:

Այսպիսով, ընկերության գրանցման փուլն ավարտված է:

2. Իրավաբանական անձանց/ընկերության գրանցումը պետ. ռեգիստրում ոչ էլեկտրոնային եղանակով:

2.1. Ընկերության գրանցման գործընթացը պետ. ռեգիստրում:

Իրավաբանական անձի ոչ էլեկտրոնային գրանցման դեպքում 2.2. բաժնում ներկայացված փաստաթղթերի փաթեթը (Փաստաթղթերի օրինակելի ձևերը տեղադրված են www.e-register.am կայքում՝ «Փաստաթղթերի ձևեր» բաժնում (<https://www.e-register.am/am/docs/18>): անհրաժեշտ է ներկայացնել տարածքային պետ. ռեգիստրի սպասարկման գրասենյակներ (հասցեները հղումով՝ <https://www.e-register.am/am/docs/213>)

Առանձնահատկություն. Սույն մասով ներկայացված՝ անհրաժեշտ տվյալների՝ ճիշտ և ամբողջական լրացման համար (օրինակ՝ ընկերության ֆիրմային անվանում, իրավաբանական/գտնվելու վայրի, գործունեության հասցե և այլն) անհրաժեշտ է հետևել սույն ուղեցույցի 1-ին ՄԱՍ-ում ներառված համապատասխան ցուցումներին:

2.2. Պետ. ռեգիստր ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթեր

Փաստաթղթերի փաթեթը ներառում է հայերեն⁴ լեզվով լրացված հետևյալ փաստաթղթերը՝

Դիմում: Դիմումը տրամադրվում է պետ. ռեգիստրի կողմից և լրացվում է տեղում՝ որոշ հատվածներ պետ. ռեգիստրի աշխատակցի կողմից (օրինակ՝ ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը, հիմնադիրները, գործունեության տեսակը և այլն) և որոշ հատվածներ դիմողի կողմից (օրինակ՝ ներկայացվող փաստաթղթերի մասին նշումը, դիմումի լրացման ամսաթիվը), այնուհետև դիմումը ստորագրվում է դիմումատուի կողմից:

Առանձնահատկություն. որպես դիմող կարող են հանդես գալ գործադիր մարմնի ղեկավարը, հիմնադիրներից որևէ մեկը կամ լիազորված անձը՝ համապատասխան լիազորագրի հիման վրա:

Ֆիրմային անվանման հայտ: Ֆիրմային անվանման մանրամասն կարգավորումները տես Մաս 1-ի, 1.2 պարագրաֆի «Քայլ 2»-ում:

Ֆիրմային անվանման գրանցման հայտը տրամադրվում է պետ. ռեգիստրը՝ դիմող անձի կողմից այն լրացնելու նպատակով:

Իրավաբանական անձ հիմնադրելու մասին հիմնադիրների որոշումը կամ հիմնադիր ժողովի արձանագրությունը: Ինչպես 2.1 պարագրաֆում նշվեց փաստաթղթերի օրինակելի ձևերը տեղադրված են պետ. ռեգիստրի կայքում (տես վերոնշյալ հղումը):

Եթե ընկերությունը հիմնադրվում է մեկ անձի կողմից, ապա անհրաժեշտ է ընտրել «Հիմնադիր որոշում» փաստաթուղթը, եթե ընկերությունը հիմնադրվում է մի քանի անձանց կողմից, ապա անհրաժեշտ է ընտրել «Հիմնադիրների ժողով (արձանագրություն)» փաստաթուղթը:

Որոշում: ՍՊԸ հիմնադիր որոշման մեջ անհրաժեշտ է նշել ընկերության անվանումը, հիմնադիր տվյալները (անձնագիրը կամ նույնականացման քարտը, բնակության, հաշվառման հասցեները (եթե տարբերվում են), ՀԾՀ, կանոնադրական կապիտալի չափը՝ դրամով արտահայտված, բաժնեմասերի չափերով և յուրաքանչյուր բաժնեմասի արժեքով, տնօրենի տվյալները՝ անձնագիրը կամ նույնականացման քարտը, բնակության, հաշվառման հասցեները (եթե տարբերվում են), ՀԾՀ, էլ. փոստ և նշում տնօրենի հետ աշխատանքային պայմանագրի կնքման մասին (կարող է լինել որոշակի կամ անորոշ ժամկետով): Որոշումը ստորագրվում է միանձնյա հիմնադիր կողմից:

Արձանագրություն: ՍՊԸ հիմնադրելու մասին հիմնադիրների արձանագրությունում լրացվում են նույն տվյալները, ինչ «Որոշման» դեպքում: Ի տարբերության որոշման, այս դեպքում ժողովին մասնակցողները ընտրում են ժողովի նախագահ և քարտուղար, որի մասին նշվում է արձանագրությունում: Արձանագրությունով հաստատվում է նաև մասնակիցների ցանկը և իրենց ունեցած բաժնեմասերի չափերը: Արձանագրությունը ստորագրվում է բոլոր հիմնադիրների, ժողովի քարտուղարի և նախագահի կողմից:

Առանձնահատկություն. իրավաբանական անձ հիմնադրելու մասին որոշումը/ արձանագրությունը անհրաժեշտ է ստորագրել երկու օրինակ՝ մեկ օրինակը պետ. ռեգիստր հանձնելու և մյուսը՝ ընկերությունում պահելու համար):

Իրավաբանական անձի կանոնադրությունը:

Ընկերության կանոնադրության մեջ անհրաժեշտ է նախապես նշում կատարել այն հիմնադրելու մասին որոշման մասին, ֆիրմային անվանման, իրավաբանական/գտնվելու վայրի մասին, կանոնադրական կապիտալի և հիմնադիրների/

4

Միաժամանակ հայերեն և օտար լեզվով ներկայացվող փաստաթղթերի տեքստերը պետք է շարադրվեն իրար հետևից կամ իրար կողքի այն պայմանով, որ իրար հետևից տեքստերի շարադրման դեպքում վերևում զետեղվում է հայերեն տեքստը, ընդ որում՝ տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

մասնակիցների մասին՝ մասնակցի անվանումը կամ անուն, ազգանունը, քաղաքացիությունը, անձնագրի տվյալները, հասցեն: Կանոնադրության առաջին էջը ստորագրվում է գործադիր մարմնի ղեկավարի կողմից, իսկ վերջին էջում՝ համապատասխան վայրում դրվում է հիմնադիր(ներ)ի ստորագրություն(ներ)ը:

Եթե ընկերությունը ստեղծվում է միանձնյա հիմնադրի կողմից՝ ապա անհրաժեշտ է ունենալ կանոնադրության հաստատված 2 օրինակ: Երկու օրինակներն էլ ներկայացվում պետ. ռեգիստր: Ընկերության գրանցման գործընթացի ավարտին պետ ռեգիստրի հաստատված կանոնադրության մեկ օրինակը վերադարձնում է դիմում տված անձին:

Մեկից ավել մասնակից/հիմնադիր ունենալու դեպքում կանոնադրությունը ներկայացվում է հիմնադիրների/մասնակիցների թվին համապատասխան քանակով: Կանոնադրության յուրաքանչյուր լրացուցիչ օրինակի տրամադրման համար գանձվում է պետական տուրք՝ 2000 ՀՀ դրամի չափով. քանակի սահմանափակում առկա չէ:

Պարտադիր այլ փաստաթղթեր

Անձնագրերի պատճեններ. քանի որ որոշման/արձանագրության և կանոնադրության մեջ նշվում են տեղեկություններ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի, ինչպես նաև հիմնադիր(ներ)ի/մասնակից(ներ)ի մասին, ապա անհրաժեշտ է ներկայացնել նաև վերջիններիս անձնագրերի/Ն/Ք պատճենները: Պետ. ռեգիստրի համապատասխան աշխատակիցը վերցնում է անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը, համոզվում է տվյալների իսկության մեջ, այնուհետև հետ է վերադարձնում :

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն. Լրացման նմուշը կարելի է բեռնել www.e-register.am/am/docs/315 և լրացնել, կամ լրացնել գործակալությունում: Իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները ներկայացված են հայտարարության 2-րդ էջին: Իրական շահառուի հայտարարությունում լրացվում է ներքևում տեղադրված նկարում պատկերված տեղեկատվությունը:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ N
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՐՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ
ԻՐԱՎԱՆԱԳՆՈՂ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԻՐԱՎԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1. Ես՝ _____, (անուն, ազգանուն)	հանդիսանալով _____ (անվանումը)
իրավաբանական անձի _____ (կարգավիճակը)	հայտարարում եմ, որ նշված իրավաբանական
անձի իրական շահառու է հանդիսանում՝ _____ (անուն, հայրանուն, ազգանուն)	
ա) _____ Ծննդյան ամսաթիվ (օր, ամիս, տարի)	գ) _____ Քաղաքացիություն
բ) _____ Բնակության վայր (երկիր, քաղաք, փողոց, շենք, տուն/բնակարան)	դ) _____ Անձնագրի սերիան/համարը, տրամադրման ամսաթիվը

Եթե իրական շահառուի վերաբերյալ հայտարարությունը ստորագրել է լիազորված անձը, ապա իրավասու անձի կողմից տրված լիազորագրում այդ մասին պետք է հստակ նշում պարունակի (օրինակ՝ լիազորում եմ իմ անունից տալու և ստորագրելու իրական շահառուի վերաբերյալ հայտարարությունը):

Պետ ռեգիստր ներկայանալիս (թե ընկերությունը գրանցելիս, թե արդեն գրանցված փաստաթղթերը վերցնելիս) դիմողը պետք է ունենա անձնագիր կամ Ն/Ք, լիազոր անձ հանդիսանալու դեպքում նաև համապատասխան լիազորագիր:

3: Անհատ ձեռնարկատեր (Ա/Ձ) գրանցելու կարգը

3.1. Ա/Ձ-ի էլեկտրոնային գրանցումը

Էլեկտրոնային եղանակով Ա/Ձ գրանցման գործընթացը՝ սույն ուղեցույցի «ՄԱՍ 1»-ի «1.1 Ընկերության էլեկտրոնային գրանցման նախապատրաստական փուլը» բաժնում ներկայացված՝ նույնականացման քարտի ձեռքբերման և ընկերությունների գրանցման էլեկտրոնային ռեգիստր մուտք գործելու մասով ամբողջությամբ նույնն է, ինչպես իրավաբանական անձի դեպքում:

Պետք է հետևել և կատարել քայլերն՝ ըստ նկարագրված հաջորդականության, մինչև «Նոր Ընկերություն» կոճակը: Այս դեպքում «Նոր Ընկերություն» տողի փոխարեն անհրաժեշտ է ընտրել «Ա/Ձ (Անհատ Ձեռնարկատեր)» հրամանը:

Հայտ



Կազմակերպչադրական տեսակ ✓

Անհատ ձեռնարկատեր (Ա/Ձ)

Անհատական պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Այնուհետև անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը և անցնել «Քայլ 1»-ին:

Քայլ 1: Հայտ ներկայացնողի տվյալները

Ա/Ձ էլեկտրոնային գրանցման հայտը ներկայացնում է ֆիզիկական անձը, ով ցանկանում է գրանցվել որպես Ա/Ձ:

Անհրաժեշտ է լրացնել անձի տվյալները (անուն, ազգանուն, հասցե՝ բնակության կամ հաշվառման վայրի հասցեները, քաղաքացիություն, անձնագրային տվյալներ, ՀՇՀ՝ առկայության դեպքում կամ ՀՇՀ-ից հրաժարվելու մասին նշում և այլն), որոնք պատկերված են ստորև նկարում: Այնուհետև «Պահպանել/Հաջորդ» կոճակը սեղմելու միջոցով անցնել հաջորդ քայլին:

Հայտ + Նոր- Ա/Ձ

Հայտը ներկայացնում եմ որպես ✓

Հայտատու
Անհատ ձեռնարկատեր

Անուն (հայերեն)	*	Երկիր	*
Ազգանուն (հայերեն)	*	Մարզ/Նահանգ	*
Գալարանուն (հայերեն)		Մարզ/Նահանգ	*
Ծննդյան օրվ	SSSS-MM-DD *	Ընտրված/Վարչ. շրջան	*
Սեռ	▼ *	Ընտրված/Վարչ. շրջան	*
Քաղաքացիություն	▼ *	Քաղաք/գյուղ	*
Անձնագրի սերիալն և համարը	*	Քաղաք/գյուղ	*
Ում կողմից է տրված		Փողոց	*
Երբ է տրված (օրիձակ, 2013-03-25)	SSSS-MM-DD	Տան տեսակ	*
Հանրային ծառայությունների համարանիշ		Շենք	*
Հրաժարվել է Հանրային ծառայությունների համարանիշից	Ոչ	Բնակարան/աննյակ	
		Փոստալիկ դասի	*
		Ընտրված	
		Ուղղություն	*
		Քաղաք	
		Ել. փոստ	

Պահպանել/Հաջորդ

Քայլ 2: Տվյալներ փաստացի բնակության վերաբերյալ

Այս հատվածում ինքնաշխատ կերպով լրացվում են նախորդ քայլում մուտքագրված տվյալները: Այս քայլը կատարվում է, եթե Ա/Ձ-ի փաստացի բնակության և հաշվառման վայրի հասցեները տարբեր են: Վերը նշված հասցեների համընկնման պարագայում անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը և անցնել հաջորդ քայլին:

Եթե Ա/Ձ-ի փաստացի բնակության և հաշվառման վայրի հասցեները տարբեր են, ապա անհրաժեշտ է սեղմել «Խմբագրել» կոճակը (տե՛ս ստորև նկարում՝ կարմիր շրջանակի մեջ) և լրացնել փաստացի բնակության վայրի վերաբերյալ տվյալները:

Հայտը ներկայացնում եմ որպես: **Անհատ ձեռնարկատեր**  **Խմբագրել**

Անուն (հայերեն)		Երկիր	
Ազգանուն (հայերեն)		Մարզ/Նահանգ	
Հայրանուն (հայերեն)		Համայնք/Կապի շրջան	
Ծննդյան օրվ		Քաղաք/գյուղ	
Սեռ		Փողոց	
Քաղաքացիություն		Տան տեսակ	
Անձնաթղթի սերիալ: եւ համարը		Հենք	
Ում կողմից է տրված		Բնակարան/սենյակ	
Երբ է տրված (օր/համ. 2011-03-25)		Փոստային դասիչ	
Հանրապետության/Կառավարման		Հասցե	
Հրաժարվել է Հանրապետության/Կառավարմանից		Հեռախոս +374	
		Բջջային +374	
		Էլ. փոստ	

Պահպանել/Հաջորդ

Նշված հասցեն Ա/Ձ-ի համար միաժամանակ կհանդիսանա որպես համապատասխան տարածքային հարկային տեսչությունում հաշվառման հասցե:

Քայլ 3: Տվյալներ պետական հաշվառման (անձնագրում նշված) վայրի վերաբերյալ

Այս քայլում անհրաժեշտ է նշել՝ արդյո՞ք անձը որպես Ա/Ձ հաշվառվում է իր անձնագրում նշված՝ հաշվառման վայրի հասցեով, թե փաստացի բնակության վայրի հասցեով: Փաստացի բնակության և հաշվառման վայրի համընկնման դեպքում նկարում պատկերված՝ «Պետ. գրանցման հասցեն և բնակության վայրը նույնն են» նշումը կատարելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը և անցնել հաջորդ քայլին:

Եթե փաստացի բնակության և հաշվառման վայրի հասցեները տարբերվում են, ապա անհրաժեշտ է ընտրել «Պետ.գրանցման հասցեն տարբերվում է բնակության վայրից» նշումը, որից հետո համակարգը հնարավորություն է տալիս լրացնելու հաշվառման վայրի հասցեն: Այնուհետև անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը և անցնել հաջորդ քայլին:

Տվյալներ պետական հաշվառման (անձնագրում նշված) վաղրի վերաբերյալ

Խնդրում ենք լրացնել, արդյոք որպես ԱԶ հաշվառվում եք անձնագրում նշված հասցեով, թե փաստացի բնակության: Ապաստարկման թիմը խնդրում է չփոփոխել բեռնված տվյալները, եթե չեք նշելու այլ հասցե, քան բեռնվել է:

Հայտ • Ա/Ձ

Երկիր	Փաստալին դասիչ
Սարգ/նահանգ	Հասցե
Համայնք/Կաղւ շրջան	Ընտախտ
Քաղաք/գյուղ	Քջչալին
Փողոց	Էլ. փոստ
Տան տեսակ	
Շենք	
Բնակարան/աննյակ	

- ☐ Պետ. գրանցման հասցեն է բնակության վաղը տղնն են
☒ Պետ. գրանցման հասցեն տաղբերվում է բնակության վաղրից

Պահպանել/Ճաղորդ

Քայլ 4: Տվյալներ գործունեության վայրի ու տեսակների վերաբերյալ

Այս հատվածում լրացվում են Ա/Ձ գործունեության վայրի և տեսակների վերաբերյալ տվյալները: Գործունեության տեսակների լրացման գործընթացն ավելի մանրամասն ներկայացված է վերը՝ սույն Ուղեցույցի ՄԱՍ 1-ին, 1.2. «Ընկերության էլեկտրոնային գրանցման բուն գործընթացը» պարագրաֆի «Քայլ 4»-ում:

Համակարգը պարտադիր լրացման համար առաջարկում է նաև ԱԱՀ վճարող հանդիսանալու վերաբերյալ դաշտ: Եթե գրանցման փուլում արդեն իսկ որոշված է, որ Ա/Ձ-ն ԱԱՀ վճարող է հանդիսանալու, ապա այդ դաշտում անհրաժեշտ է նշել «Այո», հակառակ դեպքում՝ «Ոչ»: ԱԱՀ վճարող համարվելու ընտրության վերաբերյալ կարգավորումները տես սույն Ուղեցույցի 4-րդ բաժնում:

Համակարգը ինքնաշխատ կերպով, որպես Ա/Ձ գործունեության հասցե է ընտրում Ա/Ձ փաստացի բնակության վայրը: Եթե գործունեության հասցեն չի տարբերվում Ա/Ձ բնակության վայրից, ապա փոփոխություն կատարելու կարիք չկա: Եթե գործունեության այլ հասցե լրացնելու կարիք կա, ապա անհրաժեշտ է սեղմել «Խմբագրել» կոճակը և լրացնել Ա/Ձ գործունեության նախընտրելի հասցեն:

Այնուհետև անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը և անցնել հաջորդ քայլին:

Տվյալներ գործունեության վայրի ու տեսակների վերաբերյալ

Ինդիում ենք լրացնել գործունեության իրականացման վիստաջի վայրի հասցեն (առկայության դեպքում) և ընտրել տնտեսական գործունեության համապատասխան դասակարգվելը:

Ամվան և հասցեի դաշտերը պետք է լրացվեն միայն հայերեն

Հայտ - Երբ- Ա/Յ

Տնտեսական գործունեության դասակարգվել

05.10.0 Քարածխի արդյունահանում

Browse *

ԱԱՀ վճարող Այո *

Գործունեության հասցե

Խմբագրել

Մարզ/նահանգ

Համայնք/Կարգ շրջան

Քաղաք/գյուղ

Փողոց

Տան տնասակ

Շենք

Բնակարան/սենյակ

Փոստալի դասի

Հասցե

Հեռախոս +374

Բջջային +374

Էլ. փոստ

Կայք

Պահպանել/Հաջորդ

Քայլ 5: Էլեկտրոնային ստորագրությունների բաժին

Այս հատվածում անհրաժեշտ է ներբեռնել «Դիմում»-ը PDF ֆորմատով, ստորագրել էլեկտրոնային եղանակով (գործընթացը մանրամասն նկարագրված է սույն Ուղեցույցի 2-րդ բաժնում), ապա ստորագրված դիմումը վերբեռնել համակարգ:

Քայլ 1

Քայլ 2

Քայլ 3

Քայլ 4

Քայլ 5

Քայլ 6

Քայլ 7

Էլեկտրոնային ստորագրությունների բաժին: Եթե դեռևս չունեք էլեկտրոնային ստորագրություն, սեղմեք «Հաջորդ» կոճակը:

Հայտ - Երբ- Ա/Յ

Հարգելի ազնիւ, եթե Դուք լիազորված եք կատարել տվյալ փոփոխությունը և ունեք ՀՀ Էլեկտրոնային նախարարության կողմից հավաստագրված ընկերության քողարկած էլեկտրոնային ստորագրություն, ապա կարող եք էլեկտրոնային ստորագրել Ձեր դիմումը և կատարել փոփոխությունը առցանց:

Ստորագրելու համար ներբեռնեք ներցունքալ առցանց հայտը Ձեր համակարգիչ, ստորագրեք այն և կցեք դիմումին:

Էլեկտրոնային ստորագրությունները տրամադրվում են ՀՀ Էլեկտրոնային նախարարության կողմից հավաստագրված ԷԿԸԳ PFC-ի կողմից:

Դիմում Ղեկնել

Դիմում No file chosen

Ստուգել

Պահպանել/Հաջորդ

Քայլ 6: Անհրաժեշտ փաստաթղթերի բաժին

Այստեղ կցվում են պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ բացի դիմումից:

«Լրացուցիչ փաստաթղթեր» բաժնում համակարգը ընտրության համար ներկայացնում է փաստաթղթերի ցանկ: Անհրաժեշտ է կատարել ընտրություն նշված ցանկից՝ տվյալ գրանցման դեպքին համընկնող փաստաթղթերի մասով: Մասնավորապես, անհրաժեշտ է կցել պետական տուրքի վճարման անդորրագիրը, անձնագիրը և ՀԾՀ-ն կամ Ն/Ք՝ «Տեսակ» հատվածում ներկայացվող փաստաթղթերի ցանկերից ընտրելով «Անձնագրի պատճեն» և «հավաստող փաստաթուղթ» տարբերակները:

Փաստաթղթերը կցվում են PDF ձևաչափով: Ընտրված փաստաթղթերը բեռնվում են համակարգ «Կցել» կոճակը սեղմելու միջոցով:

Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը կցելուց՝ բեռնելուց հետո, անհրաժեշտ է սեղմել «Պահպանել/Հաջորդ» կոճակը:

Լրացուցիչ փաստաթղթերի բաժին:

Ֆայլը (PDF) ձեռնագրով	Choose file No file chosen
Տեսակ	▼
Համար	
Անվանում	
Ամսաթիվ (SSSS-ԱԱ-ՕՕ)	SSSS-ԱԱ-ՕՕ
Հանրային	☐
Կցել	

Քայլ 7: Տվյալների ստուգում

Մինչև հայտի ամբողջական հանձնումը, նպատակահարմար է ևս մեկ անգամ ստուգել լրացված տվյալների ճշտությունը: Այսպիսով, «Քայլ 7»-ում համակարգը սպառիչ ներկայացնում է բոլոր այն տվյալները, որոնք լրացվել են, ըստ քայլերի:

Որևէ բաժնում սխալ հայտնաբերելու դեպքում հնարավոր է վերադառնալ տվյալ բաժինը՝ սեղմելով այդ «Քայլ»-ի կոճակը: Բացի այդ հնարավոր է համակարգից ստանալ նաև ծանուցում՝ հայտում առկա սխալների մասին (տե՛ս օրինակը նկարում):

Եթե հայտում սխալներ առկա չեն, ապա էջի ներքևում «Հավաստող բաժին» մասում անհրաժեշտ է ընտրել «գրանցումների բաժին»-ը և սեղմել «Վճարել/Հանձնել հայտը»: Բացված համապատասխան պատուհանի միջոցով հնարավորություն է ստեղծվում վճարել Ա/Ձ գրանցելու համար անհրաժեշտ պետական տուրք՝ 3000 ՀՀ դրամի չափով, որից հետո հայտը համարվում է հանձնված:

Համակարգը գրանցվող Ա/Ձ-ին ինքնաշխատ կերպով շնորհում է գրանցման համարը, հարկային մարմնի տրամադրած՝ հարկ վճարողի հաշվառման համարը և սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համարը:

Ա/Ձ գրանցման հավաստումը երևում է «Անձնական տիրույթ» հատվածում համապատասխան ծանուցմամբ (նշվում է Ա/Ձ անվանումը, դիմացը՝ «գրանցված է» արտահայտությունը):

Համակարգը հնարավորություն է տալիս սեղմելով Ա/Ձ անվանման վրա, ստանալ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը, որի վրա դրվում է Պետ.ռեգիստրի էլեկտրոնային կնիքը:

3.1. Ա/Ձ-ի գրանցումը պետ.ռեգիստրում ոչ էլեկտրոնային կարգով

Ա/Ձ պետ. ռեգիստրում գրանցման համար անհրաժեշտ է պետ ռեգիստր ներկայացնել

- 1) դիմում (լրացվում է պետ. ռեգիստրի աշխատողի կողմից).
- 2) անձնագիրը կամ Ն/ք (տեղում անձը նույնականացնելուց հետո փաստաթուղթը վերադարձվում է).
- 3) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ (3000 ՀՀ դրամ, որ վճարվում է տեղում):

Պետ.ռեգիստրի պատասխանատու աշխատակցի կողմից Ա/Ձ մասին տվյալները՝ անձնագրային տվյալներ, բնակության և հաշվառման վայրի հասցեներ (եթե դրանք տարբերվում են), գործունեության հասցե, քաղաքացիություն, ՀԾՀ՝ առկայության դեպքում կամ ՀԾՀ-ից հրաժարվելու մասին նշում), ԱԱՀ վճարող հանդիսանալու վերաբերյալ տեղեկություն, տնտեսական գործունեության տեսակ և այլն, համապատասխանաբար մուտքագրում են համակարգ :

Որպես անհատ ձեռնարկատեր՝ անձի հաշվառումն իրականացվում է անմիջապես անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու պահին՝ պետ. ռեգիստրի պատասխանատու աշխատակցի կողմից՝ համապատասխան իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը տրամադրելու միջոցով:

4: Իրավաբանական անձի և Ա/Ձ-ի կնիք

Սույն Ուղեցույցի մշակման պահին ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի կամ Ա/Ձ-ի կողմից կնիքի ձեռքբերումը և կիրառումը պարտադիր չէ, և փաստաթղթերի վավերացման համար բավարար է միայն ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կամ Ա/Ձ ստորագրությունը:

Այնուամենայնիվ, եթե իրավաբանական անձը կամ Ա/Ձ-ն ցանկանա ունենալ և կիրառել կնիք, ապա վերջինիս ձեռք բերման գործընթացն այսպիսին է. կնիք պատրաստելու համար անհրաժեշտ է դիմել համապատասխան ծառայություններ մատուցող ընկերություններին: Կնիքի պատրաստման համար կարող է դիմել ընկերության գործադիր մարմնի ղեկավարը կամ ընկերության/Ա/Ձ լիազոր անձը ներկայացնելով՝

իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը

Կանոնադրության բնօրինակը (իրավաբանական անձի դեպքում)

Ա/Ձ կամ ընկերության գործադիր մարմնի ղեկավարի անձնագիրը կամ պատճենը, եթե լիազոր անձ է հանդիս գալիս

Լիազորագիրը և լիազորված անձի անձնագիրը, անհրաժեշտության դեպքում:

Կնիքի պատրաստման համար ծառայությունների արժեքը սույն Ուղեցույցի պատրաստման պահին կազմում է 8000 ՀՀ դրամ և ավելի՝ ըստ առաջարկվող ձևի, չափի և դրան վերաբերող այլ պայմանների:

2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄ

Սույն գլուխը ընդգրկում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ Ա/Ձ) բանկային հաշիվ բացելու և հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում գրանցվելու՝ քայլ առ քայլ նկարագրությունը:

1. Բանկային հաշվի բացում

Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին»

ՀՀ օրենքների՝ ընկերությունը և անհատ ձեռնարկատերը իրավունք ունեն սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ՝ բանկային գործարքներ կատարելու համար: Պրակտիկորեն բոլոր ընկերությունները և անհատ ձեռնարկատերերը բացում են բանկային հաշիվները, քանի որ այդպես ապահով է գումարներ պահել, և ապահով ու հարմարավետ է վճարումներ, այլ բանկային գործարքներ կատարելը:

Քանի որ յուրաքանչյուր բանկ ունի իր սահմանած չափանիշները, ուստի ստորև ներկայացնում ենք բանկերի կողմից ներկայացվող միջին կիրառվող պահանջները:

Բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ (պարտադիր) փաստաթղթերի ցանկը

Բանկային հաշիվ բացելու համար նախընտրած բանկ թղթային տարբերակով պետք է ներկայացնել՝

Պետական գրանցման վկայականի բնօրինակը և պատճենը, Կանոնադրության բնօրինակը (միայն ՍՊԸ-ի դեպքում) և պատճենը,

ՍՊԸ-ի դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր: ԱՁ-ի դեպքում ԱՁ-ի իսկ անձնագիրը և դրա պատճենը,

Դիմում՝ բանկի ձևանմուշի համաձայն (յուրաքանչյուր բանկ ունի իր սահմանված դիմումի ձևանմուշը, որը լրացվում է բանկում անմիջապես),

Կնիք (դրա առկայության դեպքում)

10% և ավել բաժնետոմս ունեցող բաժնետերերի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Վերոնշյալ փաստաթղթերի բնօրինակների հետ ներկայացվում է նաև պատճենները, բնօրինակները ետ են վերադարձվում: Բնօրինակները ներկայացվում են դրանց հավաստիությունը փաստելու նպատակով:

Սովորաբար միջինում բանկային հաշվի բացումն իրականացվում է 15-20 րոպեում:

Նշում: Հաճախորդի հետ երկկողմանի համաձայնագրի հիմքով հաճախորդից կարող է գանձվել սահմանված միջնորդավճար՝ հաշիվ բացելու և տարեկան սպասարկման համար 3000 դրամից մինչև 40000 դրամ՝ կախված ծառայությունների կազմից և կառուցվածքից: Ծառայությունների կազմը սովորաբար ներառում է հաշվի բացում ծառայությունների փաթեթով (փաթեթը ներառում է ՀՀ դրամով հաշիվ և/կամ արտարժույթով հաշիվներ, Ինտերնետ Բանկ/Մոբայլ Բանկ համակարգ՝ անվճար, մեկ VISA Business կամ MasterCard Business տեսակի վճարային քարտ՝ առանց առաջին տարվա տարեկան սպասարկման վճարի):

Լրացուցիչ տեղեկատվություն

Հիմնականում բանկերն ունեն առցանց բանկինգ ծառայություն, որի ակտիվացումը անվճար է: Այն հնարավորություն է տալիս կառավարել հաշվի

շրջանառությունը, ինչպես նաև իրականացնել բանկային գործարքներ (փոխանցումներ, դիմումներ ավանդների և վարկերի համար, նամակներ) առցանց՝ համակարգչով կամ բջջային հավելվածի միջոցով առանց համապատասխան բանկ այցելելու:

Առանձնահատկություններ

1. ԱՄՆ-ի քաղաքացիություն ունեցող հաճախորդից պահանջվում է լրացնել նաև FATCA-ի համապատասխան ձևերը: Նշված ակտը Միացյալ Նահանգների գանձապետարանի և Միացյալ Նահանգների հարկային ծառայության (ՀԾ) օրենսդրական նոր պահանջ է, որի նպատակն է կանխարգելել Միացյալ Նահանգներում հարկերից խուսափելու դեպքերը:

FATCA-ի համապատասխան ձևերը լրացվում են համաձայն ԱՄՆ Կոնգրեսի կողմից 2010թ. մարտի 18-ին ընդունված «Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին օրենքի» (The Foreign Account Tax Compliance Act, FATCA)

2. Ոչ ՀՀ քաղաքացի անհատ ձեռներեցի դեպքում պահանջվում է ներկայացնել նաև կոմունալ վճարման անդորրագիր, բնակության վայրից տեղեկանք կամ համարժեք այլ փաստաթուղթ, որտեղ արտացոլված է ֆիզիկական անձի գրանցման/ փաստացի բնակության հասցեն:

2. Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում գրանցում

2.1. Ընդհանուր տեղեկատվություն

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանից հետո (ամսական, եռամսյակային, տարեկան, տես բաժին 3) անհրաժեշտ է հանձնել հարկային հաշվետվություններ: Այդ հաշվետվություններում հարկ վճարողը արտացոլում է իր կողմից հաշվարկված հարկերը: Հարկերը Հայաստանի բնակչության հանրային հոգսերը ֆինանսավորելու միջոց է: Այդ հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ պետական եկամուտների կողմից վարվող հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հաշվետվությունների ներկայացումը միայն էլեկտրոնային եղանակով (ոչ թղթային) օրենքի պահանջ է:

Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը նախատեսված է պարզեցնելու և ավտոմատացնելու հարկային հաշվետվությունների հանձնման գործընթացը:

Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում գրանցումը իրականացվում է <https://file-online.taxservice.am/> կայքում: Համակարգը բաղկացած է օգտագործողների երկաստիճան մակարդակից՝ լիազոր և օգտվող(ներ): Սկզբում պարտադիր է լիազորի

գրանցումը, հետո՝ օգտվողի:

Համակարգի լիազորն օժտված է հետևյալ իրավասություններով՝

Գրանցել և խմբագրել օգտվողների անունները,

Օգտվողներին շնորհել համապատասխան լիազորություններ և ցանկացած ժամանակ փոխել դրանք,

Պասիվացնել/ակտիվացնել և ջնջել օգտվողների անունները, ինչպես նաև լիազորությունները:

Օգտվողը ըստ շնորհված լիազորությունների կարող է՝

Դիտել, խմբագրել, ստորագրել հաշվետվությունները,

Դիտել, խմբագրել, ստորագրել հաշվարկային փաստաթղթերը (հարկային հաշիվ, հաշիվ վավերագիր),

Դիտել, խմբագրել համակարգի այլ բաժինները:

Հարկ վճարողը կարող է ունենալ միայն մեկ ակտիվ լիազոր: Նոր լիազոր գրանցելու և ակտիվացնելու դեպքում նախկին լիազորը ապաակտիվանում է: Միևնույն պահին, լիազորը կարող է գրանցել նոր օգտվողներ, ովքեր կկարողանան դիտել, խմբագրել և ստորագրել հարկային հաշվետվությունները: Նոր գրանցված օգտվողները ստանում են հաստատման ծանուցում իրենց իսկ նշած էլ. փոստին հասցեին:

2.2. Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում գրանցման քայլերը

Քայլ 1: 1. Լիազոր գրանցվելու համար սեղմել << Ներկայացնել հայտ>> հղման վրա:

Քայլ 2: Մուտքագրել էլ. փոստի հասցե և սեղմել հաստատել կոճակը:

Քայլ 3: Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից ավտոմատ Ձեր էլ. փոստին ուղարկվում է նամակ, և այդ ստացված նամակում նշվում է անվտանգ հղում՝ լիազորի ակտիվացման գործընթացը շարունակելու համար: Սեղմել հղման վրա՝ էլ. փոստի հասցեն հաստատելու և գրանցման գործընթացը շարունակելու համար:

Քայլ 4: Բացված էջում անհրաժեշտ է լրացնել լիազորի տվյալները, ստուգել դրանց ճշգրիտ լինելը և մուտքագրել նախընտրած օգտվողի անուն:

Քայլ 5: Այնուհետև անհրաժեշտ է ներբեռնել օնլայն համակարգից օգտվելու մասին պայմանագիրը, ստորագրել այն (ստորագրման կարգը տես Բաժին 3. Հարկային հաշվետվությունների JSigndPdf ծրագրով ստորագրություն) և վերբեռնել կայք:

Քայլ 6: Գրանցումը հաջողությամբ ավարտելուց հետո հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից ավտոմատ Ձեր նշած էլ. հասցեին ուղարկվում է նամակ, որում առկա է էլեկտրոնային պայմանագիրը և լիազորի անունն ու գաղտնաբառը:

Քայլ 7: Լիազորի անունով և գաղտնաբառով անհրաժեշտ է մուտք գործել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ՝ կազմակերպության պատասխանատու առցանց օգտվողներին գրանցելու կամ խմբագրելու համար:

Օգտվողի անուն

Գաղտնաբառ

Անվտանգության կոդ

S q s w f

Նկարը չեղանկուր. դեպքում սեղմել [այստեղ](#)

Մուտք

Քայլ 8: Մտնել լիազորների տվյալներ բաժինը և ստեղծել նոր օգտվող:

Նոր օգտվող

Օգտվողների տվյալներ

Անուն	Ազգանուն	Գաղտնաբառ	ԻՄ	Անձի հասցեային փաստաթուղթ	Փաստաթղթի ստիպիտ համար	Մեկնում է	Կազմի է միակ	Դա՛վ կողմից	Էլ. փոստ	Պատճառ	Օգտվողի անուն

Նոր օգտվող

Քայլ 9: Բացված էջում անհրաժեշտ է լրացնել օգտվողի տվյալները և պահպանել:

Քայլ 10: Օգտվողի գրանցումը հաջողությամբ ավարտելուց հետո օգտվողի էլ. հասցեին ուղարկվում է նամակ, որում առկա է էլեկտրոնային պայմանագիրը և օգտվողի անունն ու գաղտնաբառը:

3. Օգտվողների ակտիվացում և լիազորությունների շնորհում

Ինչպես արդեն վերը նշվել է, համակարգը բաղկացած է օգտագործողների երկաստիճան մակարդակից՝ լիազոր և օգտվող(ներ):

Օգտվող գրացելը անհրաժեշտ է, քանի որ օգտվողն է պատրաստում, խմբագրում և ստորագրում հաշվետվությունները:

Օգտվող կարող է լինել տնօրենը անձամբ, ինչպես նաև՝ լիազորել այլ անձանց: Սովորաբար լիազորում են հաշվապահին:

Օգտվողների ակտիվացման և լիազորությունների շնորհման քայլերը

Քայլ 1: Լիազորը մուտք է գործում համակարգ:



Օգտագործի անուն

ԴԲԲ

Գաղափար

☐ ԵՊՀ

☐ ԵՊՀ

Միջանկյալական ան

h t 6 a o

Լիարժեք կարգի միջանկյալական ան ԵՊՀ

[Գրառ](#)

Քայլ 2: Լիազորը համակարգ մուտք գործելուց հետո իր գրասենյակում հասանելի ունենում է «Օգտվողների տվյալներ», «Լիազորների տվյալներ» և «Գործողություններ» ենթաբաժինները:

[illegible]

Քայլ 3: Գրացված օգտվողին ակտիվացնելու համար լիազորը պետք է սեղմի «Ակտիվացնել» կոճակը:

«Լիազորություններ» էջից լիազորն օգտվողին շնորհում է հաշվետվությունների, էջերի (գետեղված են անձնագրային տվյալներ, վճարման անդորագրեր և այլն), հարկային հաշիվների և հաշվարկային փաստաթղթերի հետ աշխատելու լիազորություններ՝ նշելով համապատասխան նշատուփր, և սեղմում է պահպանել կոճակը:



Ձև

Լ Ի Ա Ջ Ո Ր Ա Գ Ի Ր

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ (ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻՆ) ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

«_____» _____ 20____ թ. _____
(նշել լիազորագրի տրման ամսաթիվը) (նշել լիազորագրի տրման վայրը)

Ես՝ _____-ի _____-ս,
(կազմակերպության անվանումը) (պաշտոնը, անուն, ազգանուն)

կամ

Ես՝ _____-ս _____
(անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը) (հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ)

հաշվառված _____,
(նշել հաշվառման վայրը) (նշել անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը)

սույնով լիազորում եմ _____-ին
(անուն, ազգանուն)

_____, հաշվառված _____
(նշել անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը) (նշել հաշվառման վայրը)

ինձ ներկայացնել հարկային մարմնում՝ օժտելով իմ անունից գործողություններ իրականացնելու իրավունքով, այդ
թվում՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Լիազորագիրը տրված է _____ ժամկետով և գործում է մինչև
(նշել ժամկետը)

«_____» _____ 20__ թ.:

Լիազորող՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Լիազորված անձը ստորագրված, իսկ կնիքի առկայության դեպքում, կնքված լիազորագիրը առձեռն կամ էլեկտրոնային եղանակով ներկայացնում է հարկային տեսչության սպասարկման բաժին: Լիազորագրում նշված էլեկտրոնային հասցեին ստանում է լիազորի գրասենյակ մուտք գործելու համար օգտվողի անունը և գաղտնաբառը:

3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՂ ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Ներածություն

ՀՀ հարկ վճարողները պարտավոր են հաշվարկել հարկերն ինքնուրույնաբար և հաշվետվություններ հանձնել ՊԵԿ, որտեղ նշվում են այդ հաշվարկած հարկի գումարները:

Սույն ուղեցույցի նպատակն է թե նորաստեղծ արտադրող տնտեսավարողները ինչ հարկերի հետ գործ կունենան, ինչպես պարզ եղանակով լրացնեն, ներկայացնեն հարկային հաշվետվությունները (ընդհանուր գծերով) և ինչպես վճարեն հարկերը ՀՀ պետական և համայնքային բյուջե:

Ուղեցույցի սույն բաժնի շարադրանքն ունի հետևյալ հաջորդականությունը՝

Համառոտ տեղեկատվություն հարկատեսակների մասին, ինչպես էլեկտրոնային եղանակով լրացնել հարկային հաշվետվությունները, ինչպես էլեկտրոնային եղանակով ներկայացնել հարկային հաշվետվությունները, ինչպես վճարել արդեն իսկ հաշվարկված և հաշվետվություններում արտացոլված հարկերը:

Վերապահում. Սույն բաժնում նշված հարկատեսակների բուն հաշվարկելու մեթոդաբանական հարցերին անդրադարձ չի կատարվում: Դա նաև նշանակում է, որ անդրադարձ չի կատարվելու հարկային օրենսդրությամբ հարկերը հաշվարկելու նպատակով սահմանված առանձնահատուկ բանաձևերին և այլ նմանատիպ դրույթներին: Ենթադրվում է, որ այդ գործառույթը կիրականացվի ոչ թե անմիջականորեն արտադրություն նախաձեռնած անձի կողմից, այլ դրանով կգբաղվի համապատասխան որակավորմամբ և փորձառնությամբ այլ մասնագետ:

Հայաստանում գործող հարկատեսակները

Հայաստանում գործում են համապետական և տեղական հարկեր: Համապետական հարկերը վճարվում են ՀՀ բյուջե, իսկ տեղականները՝ համայնքային բյուջե:

Հարկը իրենից ներկայացնում է պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով ՀՀ և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար:

Համապետական հարկերն են՝

- Շահութահարկ,
- Ավելացված արժեքի հարկ(ԱԱՀ),
- Եկամտային հարկ,
- Բնօգտագործման վճար,
- Բնապահպանական հարկ:

Տեղական հարկ՝

Անշարժ գույքի հարկ (հողի հարկ, գույքահարկ)

Շահութահարկ.

Շահութահարկը վճարվում է ՍՊԸ-ի կամ անհատ ձեռնարկատիրոջ շահույթից 18 տոկոս դրույքաչափով: Շահույթը իրենից ներակայացնում է եկամուտների և ծախսերի տարբերություն:

Օրինակ՝ 2021թ.-ին ջերմոցում արտադրված լոլիկի վաճառքների իրացումից հասույթը (եկամուտ) կկազմի 256,608,000 ՀՀ դրամ, իսկ ծախսերը՝ 173,942,776 ՀՀ դրամ: Շահույթը կլինի 82,665,224 ՀՀ դրամ, հետևաբար ՀՀ պետական բյուջե վճարվող շահութահարկի գումարը նման թվերի պարագայում կկազմեր 14,877,940 ՀՀ դրամ:

Հատուկ նշում. գյուղատնտեսական արտադրանք արտադրողները Հայաստանի Հանրապետության օրենքով մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ազատված են շահութահարկի վճարումից: Հետևաբար ստացվում է լոլիկի արտադրությամբ զբաղվող ՍՊԸ-ն կամ Ա/Ձ չի վճարի վերոնշյալ օրինակում նշված 14,877,940 ՀՀ դրամը:

ԱԱՀ

Ավելացված արժեքի հարկը համարվում է անուղղակի հարկ, այսինքն այն ուղղակիորեն կապ չունի բիզնեսի շահութաբեր կամ վնասաբեր լինելու հետ: Այն վճարվում է իրացումից հասույթի 20 տոկոսի տեսքով հարկի և ձեռքբերումների 20 տոկոսի չափով հարկի տարբերության չափով:

Օրինակ՝ 2021թ. հունվար ամսվա իրացումից հասույթի զուտ գումարը կազմում է 28,512,000 դրամ: ԱԱՀ պարունակող նյութական ձեռքբերումների զուտ գումարը կազմում է 15,827,000 դրամ: ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ գումարը կկազմի $28,512,000 \times 20\% - 15,827,000 \times 20\% = 2,537,000$ ՀՀ դրամ:

Հատուկ նշում. ՍՊԸ-ն կամ Ա/Ձ-ն նշված ԱԱՀ 2,537,000 ՀՀ դրամի վճարման պարտավորություն չի ունենա, քանի որ վճարման պարտավորությունը Հայաստանի Հանրապետության օրենքով առաջանում է իրացումից հասույթը 115մլն դրամ գերազանցող մասից:

Եկամտային հարկ

Եկամտային հարկը ֆիզիկական անձանց եկամուտներից հաշվարկվող հարկ է: Այն դեպքում, երբ եկամուտը վճարում է որպես գործատու ՍՊԸ-ի կամ Ա/Ձ կողմից, եկամտային հարկը հաշվարկելու, այդ հաշվարկված գումարի չափով աշխատավարձից պակասեցնելու (պահելու) և դրանից հետո այդ գումարը պետական բյուջե հասցնելու պարտավորությունը կրում է այդ գործատուն:

Հարկ բառը սույն բաժնում օգտագործվում է լայն իմաստով:

Նորաստեղծ ընկերությունը գործ է ունալու նաև 2 այլ հարկերին հավասարեցված վճարների հետ՝

Ա. Սոց. Վճար

Վերաբերվում է 1974թ.-ից հետո ծնված աշխատակիցներին, որոնք մասնակցում են պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին:

Բ. Դրոշմանիշային վճար

Այս գումարը փոխանցվում է զինծառայողների ապահովագրության հիմնադրամին:

Օրինակ՝ եթե ջերմոցի աշխատակցի հետ կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն աշխատավարձը կազմում է 156 000 դրամ (դրան անվանում են “համախառն աշխատավարձ”), ապա եկամտային հարկը և այլ հարկին հավասարեցված՝ վերը նշված 2 տեսակի պարտադիր վճարները գործատուի կողմից պահելուց հետո կստանա 113 220 աշխատավարձ(դրան անվանում են “մաքուր կամ զուտ աշխատավարձ”): Այդ զուտ աշխատավարձը գործատուն պարտավոր է վճարել բանկային փոխանցմամբ (կամ այլ օրինական ձևով) մինչև հաջորդ ամսվա 15-ը:

Որոշ դեպքերում կան հաշվարկի առանձնահատկություններ:

Բնապահպանական հարկ.

Բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ հարկ է: Տվյալ դեպքում ՍՊԸ-ն կամ Ա/Ձ-ն դրա հետ գործ կունանան մթնոլորտային օդ փնսսակար նյութեր արտանետելու դեպքում, օրինակ գազի օգտագործման դեպքում:

Բնօգտագործման վճար.

Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման դիմաց վճար է:

Գյուղատնտեսությամբ զբաղվող ՍՊԸ-ն կամ Ա/Ձ կարող է գործ ունենալ բնապահպանական վճարի հետ եթե ջրային համակարգից ջրառն իրականացնի անմիջականորեն: Մյուս դեպքերում բնապահպանական վճարի հետ գործ չի ունենա:

Անշարժ գույքի հարկ.

Անշարժ գույքի հարկը ՍՊԸ-ին կամ Ա/Ձ սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (հողի և շինության) համար համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ գործունեության արդյունքներից: ՍՊԸ-ն կամ Ա/Ձ գործ է ունենալու գյուղատնտեսական նշանակության հողի և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և դրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններ ապահովող շենքերը և շինությունների համար վճարվող հարկի հետ:

1. Հաշվետվությունների էլեկտրոնային ստորագրություն

ՀՀ ում հարկային հաշվետվությունները ներկայացվում են բացառապես էլեկտրոնային եղանակով:

1.1 Էլեկտրոնային հարկային հաշվետվությունները ներկայացնելու անհրաժեշտ նախապայմանները.

Նույնականացման քարտ (տես սույն Ուղեցույցի Բաժին 1 «Նույնականացման քարտի ձեռքբերումը» պարագրաֆ):

Նույնականացման քարտ կարդացող սարք (քարտը կարող եք ձեռք բերել ԷԿԵՆԳ ՓԲԸ-ից, տես հետևյալ [հղումով](#)):

Cryptocard Suite Manager - նույնականացման քարտն աշխատեցնող հիմնական ծրագրային ապահովում (ծրագիրը անհրաժեշտ է բեռնել հետևյալ [հղումով](#)):

Adobe Acrobat Reader DC - էլ. ստորագրության հավաստագրի վավերականության ստուգման ծրագրային ապահովում (ծրագիրը անհրաժեշտ է բեռնել հետևյալ [հղումով](#)):


JSigPdf PDF - ֆայլերի ստորագրման համար նախատեսված ծրագրային ապահովում (ծրագիրը անհրաժեշտ է բեռնել հետևյալ [հղումով](#)):

Հարկային հաշվետվությունները ստորագրվում են վերոնշյալ 5-րդ կետում նշված JSigPdf PDF ծրագրով:



1.2 Հարկային հաշվետվությունների JSigPdf ծրագրով ստորագրություն

Start մենյուից բացել JSigPdf ծրագիրը Start-> Programs -> JSigPdf-> JSigPdf 1.6.4



Նշել **Advanced View** դաշտը

Load keys կոճակի միջոցով ընտրել ստորագրողի հավաստագիրը

Input PDF file դաշտում ներբեռնել փաստաթուղթը (փաստաթուղթը պետք է նախապես պահպանված լինի համակարգչի որևէ թղթապանակում՝ Folder  տես ստորև)

Պարտադիր նշել **“Append Signature to the existing one”** հատվածը

Sign It սեղմելուց հետո CryptoTech CSP պատուհանում մուտքագրել PIN կոդը և սեղմել OK:

Այս բոլոր քայլերը կատարելուց հետո ստորագրված փաստաթուղթը հայտնվում է այն նույն թղթապանակում, որտեղ պահպանված էր լրացված, սակայն դեռ չստորագրված հարկային հաշվետվության փաստաթուղթը: Ստորագրված փաստաթուղթի անվան վերջին մասում հայտնվում է **signed** բառը: Օրինակ եթե չստորագրված փաստաթուղթի անունը եղել է Form_Im_ 26.01.2021 ստորագրելուց հետո փաստաթղթի անվանումը կլինի Form_Im_ 26.01.2021_ signed

Մուտք կոճակը սեղմելուց հետո հայտնվում է հետևյալ հաղորդագրությունը.



2. Մուտք հարկային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգ

Հարկային հաշվետվությունները լրացվում են և ներկայացվում են հարկային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգի միջոցով՝ <https://file-online.taxservice.am/> կայքում: Հարկային հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգերը տես ստորև ՄԱՍ 3-ում:

Օգտվողի անունով և գաղտնաբառով (տես սույն Ուղեցույցի Բաժին 2 ՄԱՍ 3) անհրաժեշտ է մուտք գործել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ:

3. Հարկային հաշվետվությունների լրացումը, ներկայացումը և հարկերի վճարումը

Ստորև ներկայացվում են ջրամատակարար տնտեսության համար սովորաբար կիրառելի հարկատեսակների և կամ հարկային ռեժիմների բնորոշ հարկային հաշվետվությունների լրացման, հանձնման և հարկի գումարների վճարման պարզաբանումները:

Նշում.

Հաշվետվություններում համակարգն ավտոմատ լրացնում է հարկ վճարողի անունը, հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ), հարկ վճարողի գտնվելու վայրը: Ավտոմատ լրացվող դաշտերը խմբագրման կամ փոփոխման ենթակա չեն:

Առցանց համակարգում հաշվետվության ձևերը և համարները ժամանակի ընթացքում կարող են փոխվել:

Ա. Շրջանառության հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացումը և վճարումների կատարումը

Ա.1. Շրջանառության հարկի հաշվետվություն և վճարում

Շրջանառության հարկի հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

Շրջանառության հարկը վճարվում է յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, պետական գանձապետարանի միասնական հաշվեհամարին՝ **90008000490**:

Վճարման եղանակներն են

- Բանկային փոխանցման միջոցով
- Տերմինալների միջոցով՝ Telcell, Easypay և այլն:
- Հարկային առցանց համակարգի միջոցով՝ “Էլեկտրոնային վճարումներ”:

Առաջարկում ենք սկզբնական շրջանում առաջնորդվել a) և b) կետերում նշված վճարման եղանակներով, քանի որ c) նոր գործիք է և դեռևս կիրառման դժվարություններ ունի:

Հաշվետվության լրացում և ներկայացում

Քայլ 1. Վերոնշյալ անհատական հաշիվների տեղեկատվական պորտալից ընտրել վերևից դեպի աջ հաշվետվություններ բաժինը:

Քայլ 2. Հաշվետվություններ բաժնի՝ ձախ հատվածից ընտրել հաշվետվության ձևեր բաժինը:

Քայլ 3. Հաշվետվության ձևեր բաժնից ընտրել 232 «Շրջանառության հարկի հաշվարկ (01.07.18թ –ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար)» հաշվետվության ձևը :

The screenshot shows the 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՄԱԳԻՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՐԴԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԼ ՊՈՐՏԱԼ' (Central Portal of the Republic of Armenia Tax Authority). The 'Հաշվարկային ծախսեր' (Calculation Expenses) menu is highlighted. On the left, the 'Հաշվարկային ծախսեր' (Calculation Expenses) section is expanded, showing the '232 Շրջանառության հարկի հաշվարկ' (232 Turnover Tax Calculation) form. The main area displays a table of forms with columns for 'ՊՈՐՏԱԼ' (Portal) and 'Հաշվարկային ծախսեր' (Calculation Expenses). The table lists three forms: '232 Շրջանառության հարկի հաշվարկ' (232 Turnover Tax Calculation), '232 Շրջանառության հարկի հաշվարկ' (232 Turnover Tax Calculation), and '232 Շրջանառության հարկի հաշվարկ' (232 Turnover Tax Calculation). The first form is highlighted with a red circle.

ՊՈՐՏԱԼ	Հաշվարկային ծախսեր
232 Շրջանառության հարկի հաշվարկ	232 Շրջանառության հարկի հաշվարկ
232 Շրջանառության հարկի հաշվարկ	232 Շրջանառության հարկի հաշվարկ
232 Շրջանառության հարկի հաշվարկ	232 Շրջանառության հարկի հաշվարկ

Քայլ 4. Հաշվետվության լրացում.

Լրացվում է հաշվետու տարին և հաշվետու ժամանակաշրջանը՝ եռամսյակը: Տարին և եռամսյակը ընտրում եք առաջարկվող ցանկից:

Օրինակ՝ 2021 թ. I-ին եռամսյակ

20. Subsequent legal review (11.27.15) by the agent involved in the original review

1. Name (last, first, middle initial, last name) _____

2. Title (last name) _____

3. Position (last name) _____

4. Signature (last name) _____

5. Date (last name) _____

6. Time (last name) _____

7. Location (last name) _____

8. Other (last name) _____

9. Other (last name) _____

10. Other (last name) _____

11. Other (last name) _____

12. Other (last name) _____

13. Other (last name) _____

14. Other (last name) _____

15. Other (last name) _____

16. Other (last name) _____

17. Other (last name) _____

18. Other (last name) _____

19. Other (last name) _____

20. Other (last name) _____

[illegible]

Եվամուտները՝ ըստ գործունեության տեսակների					Տեսվարար (շնո (%))
Գործունեության տեսակը (կոդ)					
բաժնի	հաղկված	խմբ	դաս	երազրատ	
A	0	1	3	5	100



Ժամանակավոր հիշելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Անավարտ հաշվետվություններ բաժնում ձախից երկրորդը, այն կարող եք խմբագրել սեղմելով  կոճակը, փոփոխությունները կատարելուց հետո Գրանցել կոճակը:

Հաշվետվությունը գրանցելուց հետո այն հայտնվում է Լրացված հաշվետվություններ բաժնում, որը անհրաժեշտ է ստորագրել և հանձնել ՊԵԿ:



Քայլ 6. Բացել հաշվետվությունը 

Քայլ 7. Պահպանել համակարգչի որևէ թղթապանակում՝ Folder

Քայլ 8. Ստորագրել (JSigndPdf ծրագրով) տես սույն բաժնի PDF ֆայլերը JSigndPdf ծրագրով ստորագրություն՝ 1.2. պարագրաֆը

Քայլ 9. Ստորագրելուց հետո բեռնել  կոճակի միջոցով, ստորագրությունը վավեր լինելու դեպքում ակտիվանում է ստորագրություններ բաժնի  կոճակը և Հանձնել ՊԵԿ  կոճակը

Քայլ 10. Հանձնել ՊԵԿ կոճակը սեղմելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Հանձնված հաշվետվություններ բաժնում:



Ա.2 Եկամտային հարկի հաշվետվության ներկայացում և վճարում

Եկամտային հարկի հաշվետվությունը, որը միասնական է սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի հետ, ներկայացվում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաջորդող ամսվա 20-ը:

Եկամտային հարկը, սոցիալական վճարը և դրոշմանիշային վճարը վճարվում են՝ մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի (ամիս) հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Եկամտային հարկը և սոցիալական վճարը վճարվում են պետական գանձապետարանի միասնական հաշվեհամարին՝ **90008000490**, իսկ դրոշմանիշային վճարը՝ **900005001186**:

Վճարման եղանակներն են

- Բանկային փոխանցման միջոցով
- Տերմինալների միջոցով՝ Telcell, Easypay և այլն:
- Հարկային առցանց համակարգի միջոցով՝ «Էլեկտրոնային վճարումներ»:

Առաջարկում ենք սկզբնական շրջանում առաջնորդվել a) և b) կետերում նշված վճարման եղանակներով, քանի որ c) նոր գործիք է և դեռևս կիրառման դժվարություններ ունի:

Հաշվետվության լրացում և ներկայացում

Քայլ 1. Վերոնշյալ անհատական հաշիվների տեղեկատվական պորտալից ընտրել վերևից դեպի աջ հաշվետվություններ բաժինը:

Քայլ 2. Հաշվետվություններ բաժնի՝ ձախ հատվածից ընտրել հաշվետվության ձևեր բաժինը:

Քայլ 3. Հաշվետվության ձևեր բաժնից ընտրել 189 «ՀԱՇՎԱՐԿ՝ Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական» հաշվետվության ձևը :

Լրացվում է հաշվետու տարին ու հաշվետու ժամանակաշրջանի ամիսը: Տարին և ամիսը ընտրում ենք առաջարկվող ցանկից:
Օրինակ՝ 2021 թ. հունվար

[illegible]

The screenshot shows the TSP-USA Government Tax Office website. The header includes the logo and navigation links: Home, About Us, Services, Contact Us, and Privacy Policy. The main content area is titled "TSP-USA Government Tax Office" and features a large blue button labeled "Log In". A modal dialog box is displayed in the center, containing the text: "You are not logged in. Please log in to access the system. If you are having trouble logging in, please contact our support team." The dialog box has a "Log In" button and a "Close" button. The background of the website is light blue with a subtle grid pattern.

Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի վարձատրություն (դաշտ 1.7)- քաղաքացիաիրավական պայմանագրով վճարված գումարների դեպքում լրացվում է այս բաժինը

Փաստացի աշխատած ժամեր (դաշտ 1.15) -լրացվում է ձեռքով տվյալ ամսվա ամսվա ընթացքում աշխատակցի փաստացի աշխատած ժամերը:


Նշում: Քաղաքացիաիրավական պայմանագրի դեպքում փաստացի աշխատած ժամեր չի լրացվում:

Եկամտային հարկը, սոցիալական վճարը և դրոշմանիշային վճարը էլեկտրոնային համակարգում  (հաշվիչ) կոճակի միջոցով հաշվարկվում է ավտոմատ՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրությանն դրույքաչափերի:

Օրինակ՝

Պողոս Պողոսյանը աշխատանքային պայմանագրով աշխատակից է, 2021թ.-ի հունվար ամսվա աշխատավարձը կազմել է 150 000 ՀՀ դրամ: Փաստացի աշխատած ժամերը 168 ժամ է:

Հաշվետու ժամանակաշրջանի համար կհաշվարկվի 33 000 ՀՀ դրամ եկամտային հարկ և 5 250 դրամ սոցիալական վճար:



Հաշվետվությունը լրացնելուց հետո սեղմել Հաշվել ամփոփ տվյալները  կոճակը :

Քայլ 5. Հաշվետվությունը ամբողջությամբ լրացնելուց հետո սեղմել կամ Գրանցել կոճակը, եթե հաշվետվությունը խմբագրման կարիք չունի

Ժամանակավոր հիշելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Անավարտ հաշվետվություններ բաժնում ձախից երկրորդը, այն կարող եք խմբագրել սեղմելով  կոճակը, փոփոխությունները կատարելուց հետո Գրանցել կոճակը:

Հաշվետվությունը գրանցելուց հետո այն հայտնվում է Լրացված հաշվետվություններ բաժնում, որը անհրաժեշտ է ստորագրել և հանձնել ՊԵԿ:




Քայլ 6. Բացել հաշվետվությունը 

Քայլ 7. Պահպանել համակարգի որևէ թղթապանակում՝ Folder

Քայլ 8. Ստորագրել (JSigndPdf ծրագրով) տես սույն բաժնի պարագրաֆ 1.2.

Քայլ 9. Ստորագրելուց հետո բեռնել  կոճակի միջոցով, ստորագրությունը վավեր լինելու դեպքում ակտիվանում է ստորագրությունների բաժնի  կոճակը և Հանձնել ՊԵԿ  կոճակը

Քայլ 10. Հանձնել ՊԵԿ կոճակը սեղմելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Հանձնված հաշվետվությունների բաժնում



Ա.3 Շրջանառության հարկ վճարող Անհատ Ձեռնարկատերերի համար առանձնահատկությունները

Շրջանառության հարկ վճարող Անհատ Ձեռնարկատերերը, բացի շրջանառության հարկի և եկամտային հարկի հաշվետվությունից յուրաքանչյուր տարվա համար հարկային մարմին են ներկայացնում.

«Հաշվարկ՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի» հաշվետվության ձևը:

«Հաշվարկ՝ Անհատ Ձեռնարկանիրոջ և նոտարի սոցիալական վճարի» հաշվետվության ձևը, եթե ԱՁ-ն համարվում է սոցիալական վճար վճարող:

Նշում: Շահութահարկի և սոցիալական վճարի գումարները ունեն հաշվեգրման առանձնահատկություն՝ յուրաքանչյուր ամսվա համար 5000 ՀՀ դրամ :

Դրոշմանիշային վճարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ա.3.1 Անհատ Ձեռնարկանիրոջ շահութահարկի հաշվետվության լրացում և ներկայացում

Հաշվարկը՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հաշվետվությունը, ներկայացվում է տարին մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարին հաջորդող ապրիլի 20-ը:

Շահութահարկը վճարվում է տարին մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարին հաջորդող ապրիլի 20-ը ներառյալ, պետական գանձապետարանի միասնական հաշվեհամարին՝ 90008000490, իսկ դրոշմանիշային վճարը՝ 900005001186:

Վճարման եղանակներն են

- Բանկային փոխանցման միջոցով
- Տերմինալների միջոցով՝ Telcell, Easypay և այլն:
- Հարկային առցանց համակարգի միջոցով՝ «Էլեկտրոնային վճարումներ»:

Առաջարկում ենք սկզբնական շրջանում առաջնորդվել a) և b) կետերում նշված վճարման եղանակներով, քանի որ c) նոր գործիք է և դեռևս կիրառման դժվարություններ ունի:

Քայլ 1. Վերոնշյալ անհատական հաշիվների տեղեկատվական պորտալից ընտրել վերևից դեպի աջ հաշվետվություններ բաժինը:

Քայլ 2. Հաշվետվություններ բաժնի՝ ձախ հատվածից ընտրել հաշվետվության ձևեր բաժինը:

Քայլ 3. Հաշվետվության ձևեր բաժնից ընտրել 240 «Հաշվարկ՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի» հաշվետվության ձևը:

Քայլ 4. Հաշվետվության լրացում.

Լրացնել ռեզիդենտության վերաբերյալ տեղեկություն նշելով «ԱՁ/Նոտար» կոճակը (կետ 4)

Լրացնել է հաշվետու տարին (կետ 5)

Օրինակ՝

Քայլ 6. Բացել հաշվետվությունը 

Քայլ 7. Պահպանել համակարգչի որևէ թղթապանակում՝ Folder

Քայլ 8. Ստորագրել (JSigndPdf ծրագրով) տես սույն բաժնի պարագրաֆ 1.2.

Քայլ 9. Ստորագրելուց հետո բեռնել  կոճակի միջոցով, ստորագրությունը վավեր լինելու դեպքում ակտիվանում է ստորագրությունների բաժնի  կոճակը և Հանձնել ՊԵԿ  կոճակը

Քայլ 10. Հանձնել ՊԵԿ կոճակը սեղմելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Հանձնված հաշվետվությունների բաժնում



Ա.3.2 Անհատ Ձեռնարկանիքոջ սոցիալական վճարի հաշվետվության լրացում և ներկայացում

Անհատ Ձեռնարկանիքոջ սոցիալական վճարի հաշվետվություն ներկայացվում է տարին մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարին հաջորդող ապրիլի 20-ը:

Սոցիալական վճարը վճարվում է տարին մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարին հաջորդող ապրիլի 20-ը ներառյալ, պետական գանձապետարանի միասնական հաշվեհամարին՝ **90008000490**:

Վճարման եղանակներն են

- Բանկային փոխանցման միջոցով
- Տերմինալների միջոցով՝ Telcell, Easypay և այլն:
- Հարկային առցանց համակարգի միջոցով՝ “Էլեկտրոնային վճարումներ”:

Առաջարկում ենք սկզբնական շրջանում առաջնորդվել a) և b) կետերում նշված վճարման եղանակներով, քանի որ c) նոր գործիք է և դեռևս կիրառման դժվարություններ ունի:

Հաշվետվության լրացում և ներկայացում

Քայլ 1. Վերոնշյալ անհատական հաշիվների տեղեկատվական պորտալից ընտրել վերևից դեպի աջ հաշվետվություններ բաժինը:

Քայլ 2. Հաշվետվություններ բաժնի՝ ձախ հատվածից ընտրել հաշվետվության ձևեր բաժինը:

Քայլ 3. Հաշվետվության ձևեր բաժնից ընտրում ենք 244 «Հաշվարկ՝ Անհատ Ձեռնարկանիքոջ անտարի սոցիալական վճարի» հաշվետվության ձևը :

Քայլ 4. Հաշվետվության լրացում.

Լրացնել հաշվետու տարին (կետ 5)

Օրինակ՝

Եթե ԱՁ-ն գործունեությունը սկսել է իրականացնել 10.08.2020թ.-ից, ապա յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է 5000 դրամ սոցիալական վճար: Այս դեպքում 5 ամսվա համար սոցիալական վճարը կկազմի 25 000 դրամ, որն էլ անհրաժեշտ է նշել առկա տարբերակներից (կետ 8):

Նշում: Նույնիսկ եթե գործունեությունը սկսել է ամսվա կեսից, օր՝ 10.08.2020, ապա այս դեպքում միննույն է հաշարկվում է 5000 դրամ (ամսական) շահութահարկ:

Քայլ 5. Հաշվետվությունը ամբողջությամբ լրացնելու հետո սեղմել

Ժամանակավոր հիշել կոճակը, եթե անհրաժեշտ կլինեն խմբագրել հաշվետվությունը կամ Գրանցել կոճակը, եթե հաշվետվությունը խմբագրման կարիք չունի

Ժամանակավոր հիշելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Անավարտ հաշվետվություններ բաժնում ձախից երկրորդը, այն կարող եք խմբագրել սեղմելով կոճակը, փոփոխությունները կատարելուց հետո Գրանցել կոճակը:

Հաշվետվությունը գրանցելուց հետո այն հայտնվում է Լրացված հաշվետվություններ բաժնում, որը անհրաժեշտ է ստորագրել և հանձնել ՊԵԿ:

Քայլ 6. Բացել հաշվետվությունը

Քայլ 7. Պահպանել համակարգչի որևէ թղթապանակում՝ Folder

Քայլ 8. Ստորագրել (JSigPdf ծրագրով) տես սույն բաժնի պարագրաֆ 1.2.

Քայլ 9. Ստորագրելուց հետո բեռնել կոճակի միջոցով, ստորագրությունը վավեր լինելու դեպքում ակտիվանում է ստորագրություններ բաժնի կոճակը և Հանձնել ՊԵԿ կոճակը

Քայլ 10. Հանձնել ՊԵԿ կոճակը սեղմելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Հանձնված հաշվետվություններ բաժնում

Բ. Միկրոձեռնարկատիրությամբ զբաղվող հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացումը և վճարումների

կատարումը

Բ.1 Միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության հաշվետվության ներկայացում

Միկրոձեռնարկության զբաղվող սուբյեկտի հաշվետվությունը ներկայացվում է տարի մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարին հաջորդող փետրվարի 01-ը: Նշված հաշվետվությունը կրում է տեղեկատվական բնույթ և վճարման ենթակա որևէ պարտավորություն չի առաջանում:

Հաշվետվության լրացում և ներկայացում

Քայլ 1. Վերոնշյալ անհատական հաշիվների տեղեկատվական պորտալից ընտրել վերևից դեպի աջ հաշվետվություններ բաժինը:

Քայլ 2. Հաշվետվություններ բաժնի՝ ձախ հատվածից ընտրել հաշվետվության ձևեր բաժինը:

Քայլ 3. Հաշվետվության ձևեր բաժնից ընտրել 256 «Հաշվետ.՝ միկրոձեռնարկ. սուբյեկտի իրացման շրջանառ. Վերաբերյալ» հաշվետվության ձևը :

Քայլ 4. Հաշվետվության լրացում.

Լրացվում է հաշվետու տարին՝ կետ 4

Իրացման շրջանառությունը կետ 5 (քանի որ ջերմոցային տնտեսությունը արտադրություն է)

Լրացվում է գործունեության տեսակը համաձայն գործունեության դասակարգչի:

Օրինակ՝ լուլիկի աճեցում

Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների						
Գործունեության տեսակը (կոդ)						
Բաժին	Հատված	Խումբ	Պատ	Ենթադաս	Տեսակարար կշիռ (%)	
A	0	1	1	3	5	100

Տնտեսական գործունեության դասակարգիչը տես հետևյալ **հղումով**:

Քայլ 5. Հաշվետվությունը ամբողջությամբ լրացնելու հետո սեղմել

Ժամանակավոր հիշել կոճակը, եթե անհրաժեշտ կլինի խմբագրել հաշվետվությունը կամ Գրանցել կոճակը, եթե հաշվետվությունը խմբագրման կարիք չունի

Ժամանակավոր հիշելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Անավարտ հաշվետվություններ բաժնում ձախից երկրորդը, այն կարող եք խմբագրել սեղմելով  կոճակը, փոփոխությունները կատարելուց հետո Գրանցել կոճակը:

Հաշվետվությունը գրանցելուց հետո այն հայտնվում է Լրացված հաշվետվություններ բաժնում, որը անհրաժեշտ է ստորագրել և հանձնել ՊԵԿ:



Քայլ 6. Բացել հաշվետվությունը

Քայլ 7. Պահպանել համակարգչի որևէ թղթապանակում՝ Folder

Քայլ 8. Ստորագրել (JSigndPdf ծրագրով) տես սույն բաժնի պարագրաֆ 1.2.

Քայլ 9. Ստորագրելուց հետո բեռնել կոճակի միջոցով, ստորագրությունը վավեր լինելու դեպքում ակտիվանում է ստորագրությունների բաժնի կոճակը և Հանձնել ՊԵԿ կոճակը

Քայլ 10. Հանձնել ՊԵԿ կոճակը սեղմելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Հանձնված հաշվետվություններ բաժնում



Բ.2 Եկամտային հարկի հաշվետվության ներկայացում և վճարում

Միկրոձեռնարկության սուբյեկտ համարվող Ա/Ձ կամ ՍՊԸ կողմից եկամտային հարկը հարկը վճարվում է ամեն ամիս, մինչև ամսվան հաջորդող ամսվա 20, պետական գանձապետարանի միասնական հաշվեհամարին՝ **90008000490**, իսկ դրոշմանիշային վճարը՝ **900005001186**:

Վճարման եղանակներն են

- Բանկային փոխանցման միջոցով
- Տերմինալների միջոցով՝ Telcell, Easypay և այլն:
- Հարկային առցանց համակարգի միջոցով՝ “Էլեկտրոնային վճարումներ”:

Առաջարկում ենք սկզբնական շրջանում առաջնորդվել a) և b) կետերում նշված վճարման եղանակներով, քանի որ c) նոր գործիք է և դեռևս կիրառման դժվարություններ ունի:

Նշում: Միկրոձեռնարկատիրություն սուբյեկտ համարվողները՝ ՍՊԸ կամ Ա/Ձ կողմից աշխատակիցների համար եկամտային հարկը հաշվարկվում է 5 000 դրամի չափով, իսկ սոցիալական վճարը և դրոշմանիշային վճարը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Եկամտային հարկի հաշվետվությունը լրացնելու համար անհրաժեշտ է՝ ընտրել

Համարվում են միկրոձեռնարկատիրության սուբյեկտ տարբերակը

Գ. Հարկման ընդհանուր համակարգում (Շահութահարկ և ԱԱՀ) հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացումը և վճարումների կատարումը

Գ.1. Շահութահարկ վճարողների հաշվետվության ներկայացում և վճարում

1. Շահութահարկ վճարողների հաշվետվությունը ներկայացվում է տարին մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարին հաջորդող ապրիլի 20-ը:

Շահութահարկը վճարվում է տարին մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարին հաջորդող ապրիլի 20-ը ներառյալ, պետական գանձապետարանի միասնական հաշվեհամարին՝ **90008000490**

Վճարման եղանակներն են

- Բանկային փոխանցման միջոցով
- Տեղմանների միջոցով՝ Telcell, Easypay և այլն:
- Հարկային առցանց համակարգի միջոցով՝ “Էլեկտրոնային վճարումներ”:

Առաջարկում ենք սկզբնական շրջանում առաջնորդվել a) և b) կետերում նշված վճարման եղանակներով, քանի որ c) նոր գործիք է և դեռևս կիրառման դժվարություններ ունի:

Հաշվետվության լրացում և ներկայացում

Քայլ 1. Վերոնշյալ անհատական հաշիվների տեղեկատվական պորտալից ընտրել վերևից դեպի աջ հաշվետվություններ բաժինը:

Քայլ 2. Հաշվետվություններ բաժնի՝ ձախ հատվածից ընտրել հաշվետվության ձևեր բաժինը:

Քայլ 3. Հաշվետվության ձևեր բաժնից ընտրել 240 «Հաշվարկ» ռեգիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեգիդենտ շահութահարկ վճարողի» հաշվետվության ձևը:

Քայլ 4. Հաշվետվության լրացում.

Լրացնել ռեգիդենտության վերաբերյալ տեղեկություն նշելով Ռեգիդենտ շահութահարկ վճարող (կետ 4)

Լրացնել Համախառն եկամուտ և Նվազեցումներ բաժինները

Գ.2 ԱԱՀ հաշվետվության ներկայացում և վճարում

ԱԱՀ-ի հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև ամիսը հաջորդող ամսվա 20-ը:

ԱԱՀ-ի վճարվում է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի (ամիս) հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Եկամտային հարկը և սոցիալական վճարը վճարվում են պետական գանձապետարանի միասնական հաշվեհամարին՝ **90008000490**

Վճարման եղանակներն են

- Բանկային փոխանցման միջոցով
- Տերմինալների միջոցով՝ Telcell, Easypay և այլն
- Հարկային առցանց համակարգի միջոցով՝ “Էլեկտրոնային վճարումներ”

Առաջարկում ենք սկզբնական շրջանում առաջնորդվել a) և b) կետերում նշված վճարման եղանակներով, քանի որ c) նոր գործիք է և դեռևս կիրառման դժվարություններ ունի:

Հաշվետվության լրացում և ներկայացում

Քայլ 1. Վերոնշյալ անհատական հաշիվների տեղեկատվական պորտալից ընտրել վերևից դեպի աջ հաշվետվություններ բաժինը:

Քայլ 2. Հաշվետվություններ բաժնի՝ ձախ հատվածից ընտրել հաշվետվության ձևեր բաժինը:

Քայլ 3. Հաշվետվության ձևեր բաժնից ընտրել 260 «Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ (2020 թ.-ից)» հաշվետվության ձևը :

Քայլ 4. Հաշվետվության լրացում.

Լրացվում է հաշվետու տարին ու հաշվետու ժամանակաշրջանի ամիսը: Տարին և ամիսը ընտրում ենք առաջարկվող ցանկից:

Լրացվում է արտադրանքի իրացված շրջանառությունը (մեծածախ իրացման դեպքում նշվում է առանց ԱԱՀ-ի գումարը, իսկ մանրածախի դեպքում ներառյալ ԱԱՀ-ի գումարը)

Լրացվում է ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գումարը առանց ԱԱՀ-ի

Լրացվում է գործունեության տեսակը համաձայն գործունեության դասակարգչի:
Օրինակ՝ «լուրիկի աճեցում»

Տնտեսական գործունեության դասակարգիչը տես հետևյալ [հղումով](#):

ժամանակավոր հիշել կոճակը, եթե անհրաժեշտ կլինի խմբագրել հաշվետվությունը կամ Գրանցել կոճակը, եթե հաշվետվությունը խմբագրման կարիք չունի

Հաշվետվությունը գրանցելուց հետո այն հայտնվում է Լրացված հաշվետվություններ բաժնում, որը անհրաժեշտ է ստորագրել և հանձնել ՊԵԿ:



Քայլ 6. Բացել հաշվետվությունը

Քայլ 7. Պահպանել համակարգչի որևէ թղթապանակում՝ Folder

Քայլ 8. Ստորագրել (JSigndPdf ծրագրով) տես սույն բաժնի պարագրաֆ 1.2.

Քայլ 9. Ստորագրելուց հետո բեռնել կոճակի միջոցով ստորագրությունը վավեր լինելու դեպքում ակտիվանում է ստորագրություններ բաժնի կոճակը և Հանձնել ՊԵԿ կոճակը

Քայլ 10. Հանձնել ՊԵԿ կոճակը սեղմելուց հետո հաշվետվությունը հայտնվում է Հանձնված հաշվետվություններ բաժնում



Գ.3 եկամտային հարկի հաշվետվության ներկայացում և վճարում.

Եկամտային հարկը լրացվում և վճարումը կատարվում է սույն բաժնի 3-րդ Մասի Ա.2 պարագրաֆին համատասխան:

Դ. Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հաշվետվության ներկայացում և վճարում

Նշում. Անկախ այն հանգամանքից, թե հարկ վճարողը ինչ հարկման համակարգում է աշխատում, բնապահպանական հարկի կամ բնօգտագործման վճարի հարկող օբյեկտ ունենալու դեպքում պարտավոր է պետական բյուջե վճարել բնապահպանական հարկ կամ բնօգտագործման վճար: Տվյալ դեպքում ջրի՝ անմիջականորեն համակարգից ջրառի դեպքում պետք է վճարի բնօգտագործման վճար, իսկ գազի օգտագործման դեպքում՝ բնապահպանական հարկ:

Բնապահպանական հարկի և Բնօգտագործման վճարի միասնական հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

Բնապահպանական և Բնօգտագործման վճարը վճարվում է յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, պետական գանձապետարանի միասնական հաշվեհամարին՝ 90008000490:

Վճարման եղանակներն են

- Բանկային փոխանցման միջոցով
- Տեղմանների միջոցով՝ Telcell, Easypay և այլն
- Հարկային առցանց համակարգի միջոցով՝ “Էլեկտրոնային վճարումներ”:

Առաջարկում ենք սկզբնական շրջանում առաջնորդվել a) և b) կետերում նշված վճարման եղանակներով, քանի որ c) նոր գործիք է և դեռևս կիրառման դժվարություններ ունի:

Հաշվետվության լրացում և ներկայացում

Քայլ 1. Վերոնշյալ անհատական հաշիվների տեղեկատվական պորտալից ընտրել վերևից դեպի աջ հաշվետվություններ բաժինը:

Քայլ 2. Հաշվետվություններ բաժնի՝ ձախ հատվածից ընտրել հաշվետվության ձևեր բաժինը:

Քայլ 3. Հաշվետվության ձևեր բաժնից ընտրել 219 « Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկ» հաշվետվության ձևը :

Քայլ 4. Հաշվետվության լրացում.

Լրացվում է հաշվետու եռամսյակը

[illegible]

Քալ 5. Հաշվետվությունը ամբողջությամբ լրացնելու հետո սեղմել

ՓՈՒԼ 4. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Տրամադրված շինարարության թույլտվության հիման վրա նախատեսվող աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ կառուցապատողը պարտավոր է այդ մասին համապատասխան տեղեկանքով (տեղեկանքի օրինակը՝ <https://www.yerevan.am/am/one-window/#collapseTwo1#collapseWindow70> «Շինարարական աշխատանքները սկսելու մասին տեղեկանք» /Ձև 2-5/ «Բեռնել ձևաթուղթ» բաժնում) իրազեկել ՏԻՄ-ի ղեկավարին:



Տեղեկանքում նշվում են՝

- շինարարությունն իրականացնող կազմակերպության մասին,
- տեխնիկական հսկողություն իրականացնողի մասին, (որի հետ նախապես կնքվում է համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր)
- հեղինակային հսկողություն իրականացնողի մասին, (որի հետ նախապես կնքվում է համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր):

Առանց շինարարական կազմակերպության և (կամ) շինարարության որակի նկատմամբ տեխնիկական հսկողի ներգրավման կառուցապատողը կարող

է իրականացնել 1000 քմ ընդհանուր մակերեսը
չգերազանցող ջերմոցների կառուցում:

ՓՈՒԼ 5. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ)

Կառուցված շինության շինարարական աշխատանքների իրականացման ավարտը և, ըստ գործառնական նշանակության, շահագործման ընդունումը, փաստագրվում են ավարտական ակտով (շահագործման թույլտվությամբ)՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողին հանձնելուց և կառուցապատողի կողմից այն ընդունվելուց հետո:

Նշում. ՏԻՄ տարածքում ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) տալիս է ՏԻՄ ղեկավարը:

Քայլ 1. Ավարտական ակտի (շահագործման թույլտվության) համար անհրաժեշտ է ձևավորել ընդունող հանձնաժողով, որի կազմում պարտադիր պետք է ընդգրկվեն՝

1. ՏԻՄ աշխատակազմի ներկայացուցիչ (անհրաժեշտ է ՏԻՄ ներկայացնել համապատասխան դիմում, որի օրինակը հաստատվում է յուրաքանչյուր տարածքային ՏԻՄ ղեկավարի կողմից):

Եթե կառուցված օբյեկտին (տվյալ դեպքում՝ ջերմոցին) անհրաժեշտ է տրամադրել նաև փոստային առաքման նոր հասցե, ապա Ընդունող հանձնաժողովի կազմում ՏԻՄ աշխատակազմի համապատասխան անդամի թեկնածություն ստանալու դիմումին կառուցապատողը պետք է կցի նաև հասցե տրամադրելու ծառայության համար սահմանված կարգով նախատեսված տեղական վճարի անդորրագիրը (գումարի չափը սահմանում է համապատասխան տարածքային ՏԻՄ ղեկավարի որոշմամբ):

Հանձնաժողովի անդամի թեկնածության առաջարկը ՏԻՄ-ից կառուցապատողը ստանում է իր կողմից դիմումը մուտքագրելու օրվանից 5-օրյա ժամկետում:

2. Կառուցապատողը կամ նրա օրինական ներկայացուցիչը, ով հանդիսանում է Ընդունող հանձնաժողովի նախագահը:

Նշում. Ընդ որում, եթե շինարարության թույլտվությամբ առկա են համակառուցապատողներ կամ գրանցված անշարժ գույքն (հողամասը կամ տարածքը) ունի համասեփականատերեր, ապա վերջիններս նույնպես ներգրավվում են Ընդունող հանձնաժողովի կազմում, որպես հանձնաժողովի անդամներ:

3. Շինարարությունն իրականացրած շինարարական կազմակերպությունների ներկայացուցիչները (ենթակապալառու (եթե այդպիսին առկա է),

4. Հեղինակային հսկողություն իրականացնողի

ներկայացուցիչը,

5. ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության ներկայացուցիչը,

6. Մատակարար կազմակերպությունների ներկայացուցիչները՝ համաձայն Նախագծման թույլտվությամբ սահմանված պահանջների և/կամ նախագծային փաստաթղթերով հաստատված պայմանների:

Մասնավորապես.

- Էլեկտրամատակարարում ապահովողն ու սպասարկողը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ,
- Ջրամատակարարում ու ջրահեռացում ապահովողն ու սպասարկողը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ,
- Գազամատակարարում ապահովողն ու սպասարկողը՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ,
- Հեռահաղորդակցության ցանց անցկացրած կազմակերպության (կամ օպերատորի) ներկայացուցիչը:

Այն դեպքերում, երբ օբյեկտի վերակառուցման (վերականգնման, ուժեղացման, արդիականացման) կամ գործառնական նշանակության փոփոխության հետևանքով չի առաջացել որևէ ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ ծառայությունների մատուցման փոփոխության անհրաժեշտություն, նշված ծառայության մատակարար կազմակերպության ներկայացուցիչը չի ընդգրկվում ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի կազմում:

7. Համապատասխան ՏԻՄ աշխատակազմի ներկայացուցիչը:

Քայլ 2. Ձևավորված Ընդունող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում

1. Ընդունող հանձնաժողովը ձևավորում և ղեկավարում է կառուցապատողը.

2. Ընդունող հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է կառուցապատողի հաշվին,

3. Ավարտված շինարարական օբյեկտի՝ հաստատված Նախագծային փաստաթղթերին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստվում է Ընդունող հանձնաժողովի ակտով (այսուհետ՝ Ընդունող հանձնաժողովի ակտ, օրինակը՝ <https://www.yerevan.am/am/one-window/#collapseTwo1#collapseWindow74> «Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ /Ձև 3-2-1/» մասի «Բեռնել ձևաթուղթ» բաժնում) և հիմնավորվում է Կատարողական փաստաթղթերով (կազմը և ձևերը սահմանվում են ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից, ընդ որում՝ կազմում է շինարարություն

իրականացնող ընկերություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ) կամ կառուցված օբյեկտի Տեխնիկական վիճակի (մասնավորապես՝ շահագործման ենթակա լինելու) մասին համապատասխան հետազննության դրական եզրակացությունով:

4. Ընդունող հանձնաժողովի ակտը պետք է ստորագրված ու կնքված (եթե առկա է կնիք) լինի հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, որոնցից յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում պատասխանատվություն է կրում հանձնաժողովի կողմից ընդունված որոշման համար՝ օրենքով սահմանված կարգով:

Մատակարար կազմակերպությունների կողմից Ընդունող հանձնաժողովի ակտի ստորագրումը հիմք է այդ կազմակերպությունների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու համար:

5. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկված՝ ՀՀ Քաղաքաշինական պետական տեսչության, շահագրգիռ պետական այլ մարմինների և մատակարար կազմակերպությունների ներկայացուցիչները ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում տալիս են եզրակացություն՝ ստորագրելով ընդունող հանձնաժողովի ակտը, հավաստելով ավարտված շինարարական աշխատանքների համապատասխանությունը հաստատված Նախագծային փաստաթղթերին և տրամադրված տեխնիկական պայմաններին: Այն ենթակա է իրականացման սույն ուղեցույցի ՔԱՅԼ 1-ում նշված՝ դիմումն ստանալու օրվանից 3-օրյա ժամկետներում:

Եթե, նշված ժամկետներում հանձնաժողովի համապատասխան անդամը չի ստորագրում Ընդունող հանձնաժողովի ակտը,

ապա սահմանված նույն ժամկետում պարտավոր է կառուցապատողին տրամադրել իր իրավասության սահմաններում արված դիտողությունները՝ նշելով արձանագրված թերությունները, որոնք պետք է վերացվեն շինարարական կապալի պայմանագրով սահմանված ժամկետում, այլապես օբյեկտը հանձնաժողովի կողմից չի ընդունվում:

Նշված թերությունները վերացնելու պարագայում կառուցապատողը կարող է կրկին դիմել Ընդունող հանձնաժողովի համապատասխան ներկայացուցչին (այսինքն՝ այդ մարմնին), որը ետօրյա ժամկետում պետք է տա իր եզրակացությունները, ստորագրի հանձնաժողովի ակտը:

Քայլ 3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ) ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ընդունող հանձնաժողովի ակտն ստորագրվելուց հետո 10-օրյա ժամկետում անհրաժեշտ է համայնքապետարան մուտքագրել Ավարտական ակտը ձևակերպելու դիմում

(դիմումի օրինակը՝ <https://www.yerevan.am/am/one-window/#collapseTwo1#collapseWindow74> «Ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպման վերաբերյալ դիմում /Ձև 3-3-1/» մասի «Բեռնել ձևաթուղթ» բաժնում է ներկայացված):

Դիմումին կցվում են

- Ընդունող հանձնաժողովի ակտը (այսուհետ՝ Ընդունող հանձնաժողովի ակտ, օրինակը՝ <https://www.yerevan.am/am/one-window/#collapseTwo1#collapseWindow74> «Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ /Ձև 3-2-1/» մասի «Բեռնել ձևաթուղթ» բաժնում),
- Կատարողական փաստաթղթերի ցանկը,
- Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության տրամադրման համար սահմանված առանձին-առանձին վճարումների անդորրագրերի բնօրինակները (գումարի չափը սահմանվում է ՏԻՄ ղեկավարի որոշմամբ):

Դիմումը քննարկվում է 3-օրյա ժամկետում:

Գործընթացի դրական ելքի պարագայում ՏԻՄ գրասենյակից դիմումատուն ստանում է ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ) երկու օրինակները:

Նշում: Շինարարական թույլտվության ստացման գործընթացը նախատեսվում է իրականացնել նաև էլեկտրոնային կարգով՝ www.e-permits.am համակարգի միջոցով:

Հաշվի առնելով, որ սույն ուղեցույցի կազմման պահին նշված համակարգը ոչ լիարժեք է գործում և գտնվում է համակարգի արդիականացման և տեխնիկական վերամշակման փուլում, սույն ուղեցույցում շինարարության թույլտվության ձեռքբերման էլեկտրոնային կարգը չի ներկայացվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ

ՀՀ-ում անշարժ գույք հանդիսացող ջերմոցային տնտեսության (ջերմոցի) շինարարությունն իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել համապատասխան լիցենզիա:

Լիցենզիա անհրաժեշտ է, եթե անշարժ գույք

հանդիսացող ջերմոցային տնտեսության ընդհանուր մակերեսը չի գերազանցում 1000 քմ:

Այսպիսով, եթե անշարժ գույք հանդիսացող ջերմոցային տնտեսության ընդհանուր մակերեսը գերազանցում է 1000 քմ, ապա անհրաժեշտ է գրանցված և կառուցապատող համարվող ՍՊԸ-ի կամ Ա/Ձ-ի կողմից ձեռք բերել համապատասխան լիցենզիա կամ պայմանագիր կնքել, որպես կառուցապատող՝ համապատասխան լիցենզիա ունեցող շինարարական կազմակերպության հետ:

Նշում: Ամբողջ շինարարության ընթացքում անշարժ գույք հանդիսացող ջերմոցային տնտեսության շինարարության նկատմամբ իրականացվում են տեխնիկական հսկողություն և ինժեներական հետազննում՝ կառուցապատողի և նշված տեսակի գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող մասնագիտական կազմակերպության հետ կնքվող պայմանագրի հիման վրա:

9

ԼԻՑԵՆԶԻԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՎՃԱՐՆԵՐԸ, ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Այն պարագայում, եթե ՍՊԸ կամ Ա/Ձ՝ ջերմոցային

տնտեսություն վարողը կցանկանա հենց ինքը ստանա շինարարության թույլտվություն և ինքնուրույն կառուցել իր ջերմոցը, ապա պետք է հաշվի առնել հետևյալը. ՀՀ-ում ՍՊԸ կամ Ա/Ձ կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզավորումը իրականացնում է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (<http://www.min-urban.am/am/>): Ընդ որում լիցենզավորման գործընթացը հնարավոր է իրականացնել ինչպես էլեկտրոնային, այնպես էլ ոչ էլեկտրոնային եղանակով:

ՄԱՍ1. Լիցենզավորման գործընթացի ոչ էլեկտրոնային իրականացումը

ՍՊԸ հանդիսացող հայտատուները լիցենզիա ստանալու համար ներկայացնում են փաստաթղթերի հետևյալ փաթեթը՝

*փաթեթում ներկայացված 1-ին, 3-րդ և 4-րդ ձևերը ներկայացվում են ներքևում:

- լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 1 ձևի:

Հայտում նշվում են՝ ՍՊԸ անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ <<քաղաքաշինություն>>,

- տվյալներ կազմակերպությունում ներգրավված՝ արտադրական ոլորտում գործունեություն իրականացնելու համար առնվազն մեկ մասնագետի մասին՝ համաձայն N 3 ձևի (այդ թվում՝ նրա մասնագիտական ունակությունը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև մասնագետի • մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում • պետական տուրքի վճարման անդորրագիրը՝ տարեկան 80 000 ՀՀ դրամի չափով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ
(վերնագիրը փոփ. 27.07.17 N 918-Ն)**

(հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը)

Հ Ա Ց Ց

Խնդրում եմ տրամադրել շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

Հայտին կցվում են՝

- 1) տվյալներ կազմակերպությունում ներգրավված մասնագետի (մասնագետների) և ոլորտի մասին (N 3 ձև).
- 2) մասնագետի դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.
- 3) մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում կատարված աշխատանքների ցանկը (N 4 ձև).
- 4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՄՈՂ _____

(պաշտոնը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը լրաց. 06.10.11 N 1415-Ն, 28.04.16 N 432-Ն, փոփ., լրաց., խմբ. 27.07.17 N 918-Ն)

Տ Վ Յ Ա Լ Լ Ե Ր

(կազմակերպության անվանումը)

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՈԼՈՐՏԻ (ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

NN ը/կ	Աշխատողի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը	Կրթությունը	Մասնագիտությունը	Ոլորտը (ոլորտները)
1	2	3	4	5

(կազմակերպության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Ձև N 4

(կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

(լիցենզավորվող սուբյեկտի անվանումը (անունը, ազգանունը)

Ց Ա Ն Կ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Աշխատանքի (ծառայության) անվանումը	Կատարման ժամկետը	Վավերացումը (պայմանագրի, ակտի համարները)
1	2	3	4

(կա

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող հայտատուները լիցենզիա ստանալու համար ներկայացնում են փաստաթղթերի հետևյալ փաթեթը՝

*Տե՛ս սույն բաժնի շրջանակներում ներկայացվող ձև 3-ը և 4-ը վերևում, իսկ ձև 2-ը ներքևում:

- լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 2 ձևի:

Հայտում նշվում են Ա/Ձ անունը, հայրանունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ քաղաքաշինություն

- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- տվյալներ Ա/Ձ կամ նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ արտադրական ոլորտում գործունեություն իրականացնելու համար առնվազն մեկ մասնագետի մասին՝ համաձայն N 3 ձևի (այդ թվում՝ նրա մասնագիտական ունակությունը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը),
- մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում կատարված աշխատանքների ցանկը՝ համաձայն N 4 ձևի,
- պետական տուրքի վճարման անդորրագիրը՝ տարեկան 80 000 ՀՀ դրամի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

(վերնագիրը փոփ. 27.07.17 N 918-Ն)

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

(անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը)

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

Հ Ա Ց Ց

Խնդրում եմ տրամադրել շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված ադյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

(ոլորտը (ոլորտները), որի (որոնց) համար տրամադրվելու է (են) աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիր (ներդիրներ)

Հայտին կցվում են՝

- 1) անձնագրի պատճենը.
- 2) տվյալներ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն աշխատող մասնագետի (մասնագետների) և ոլորտի մասին (N 3 ձև).
- 3) մասնագետի դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.
- 4) մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում կատարված աշխատանքների ցանկը (N 4 ձև).
- 5) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՍՈՂ _____
(պաշտոնը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Լիցենզիա տալու ընթացակարգը

- Լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում,
- Լիցենզիան տրվում է անժամկետ,
- Լիցենզավորված անձն իրավունք ունի գործունեություն իրականացնելու միայն լիցենզիային կից տրամադրված ներդիրում (ներդիրներում) նշված ոլորտում (ոլորտներում):

10

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուղեցույցի այս բաժնում ներկայացված են ջերմոցային տնտեսություն հանդիսացող ՍՊԸ-ում ֆիզիկական անձանց աշխատանքի ընդունելու, աշխատանքը կազմակերպելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն քայլերը, պահանջները:



1. Աշխատանքի ընդունման ընդհանուր պահանջներ

ՔԱՅԼ 1. Աշխատողի փաստաթղթերի հավաքագրում.

Անձը հաստատող փաստաթուղթ- վավեր անձնագիր կամ նույնականացման քարտ,

Սոցիալական ապահովության քարտ կամ դրա փոխարինող փաստաթուղթը՝ հանրային ծառայությունների համարանիշ պարունակող տեղեկանք,

Տեղեկանք առողջական վիճակի մասին (սանիտարական գրքույկ),

Կրթության / որակավորման մասին վկայական (ըստ անհրաժեշտության),

16-18 տարեկան անչափահասների համար՝ ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի կամ խնամակալի գրավոր համաձայնություն,

Այլ փաստաթղթեր (ըստ անհրաժեշտության):



Նշում: 2-րդ կետում նշված՝ սոցքարտի ներկայացման կարիք չի լինի, եթե անձը ներկայացնում է Նույնականացման քարտ, որի դարձերեսին, առկա է տեղեկություն նաև սոցիալական քարտի մասին:

ՔԱՅԼ 2. Բժշկական զննություն



Աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը մեկ անգամ, ջերմոցային տնտեսության այն աշխատակիցներն, ովքեր շփում ունեն սննդամթերքի՝ սույն Ուղեցույցում բերված օրինակին համապատասխան՝ լուրջ հետ դրա՝ արտադրման, փաթեթավորման, պահպանման, ինչպես նաև բոլոր տեսակի փոխադրամիջոցներով փոխադրման ընթացքում, **պետք է անցնեն պարտադիր բուժզննություն:**

Ընկերության այլ աշխատակիցների համար պարտադիր բուժզննություն չի պահանջվում:

Բուժզննության արդյունքների վերաբերյալ տվյալներն ամփոփվում են սանիտարական գրքույկում:

Բուժզննությունն իրականացվում է այդպիսի ծառայություններ մատուցող լիցենզավորված ցանկացած բժշկական հաստատությունում՝ ջերմոցատեր գործատուի հետ ունեցած ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա: Սանիտարական գրքույկը տրամադրվում է ջերմոցատեր գործատուի կողմից:

Եթե նախնական՝ աշխատանքի ընդունվելիս, բուժզննության արդյունքում նշված աշխատանքի հետ անհամատեղելի հիվանդություններ չեն հայտնաբերվում, ապա անձը կարող է սկսել աշխատանքը ջերմոցային տնտեսությունում:

Աշխատանքի ընթացքում՝ պարբերական բուժզննության արդյունքներով աշխատանքի հետ անհամատեղելի առողջական խնդիր առաջանալու դեպքում աշխատողը չի կարող շարունակել իր աշխատանքը մինչ այդ զբաղեցրած պաշտոնում:

ՔԱՅԼ 3. Աշխատանքի ընդունումը

Անձի աշխատանքի ընդունումը կարող է լինել աշխատանքային պայմանագրի կնքմամբ կամ անհատական իրավական ակտ՝ հրաման/կարգադրություն և այլն, ընդունելու միջոցով:

Աշխատանքային պայմանագիր. բովանդակությանը և կնքմանը վերաբերող պահանջներ

Բովանդակություն (նվազագույն, պարտադիր պայմաններ) կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը.

աշխատողի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը.

գործատուի անվանումը, աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը.

պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները.

հիմնական աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը.

աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը (անհրաժեշտության դեպքում).

փորձաշրջան սահմանելու դեպքում՝ փորձաշրջանի տևողությունը և պայմանները.⁷

աշխատաժամանակի ռեժիմը՝ նորմալ տևողություն/ ոչ լրիվ աշխատաժամանակ/կրճատ տևողություն/ աշխատաժամանակի գումարային հաշվարկ.

ամենամյա արձակուրդի տեսակը և տևողությունը.

իրավական ակտը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը:

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր, հաստատվում է երկու բնօրինակներից

աշխատողին տրամադրվում է հաստատված մեկ բնօրինակ:

Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել (հաստատվել) նաև կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ:



ամենամյա արձակուրդի տեսակը և տևողությունը.

իրավական ակտը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը:

Ի լրումն աշխատանքային պայմանագրի կնքման, բուն աշխատանքը սկսելուց առաջ գործատուն աշխատողին ծանոթացնում է աշխատանքի պայմաններին, ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ կանոններին և իրավական ակտերին:

Քայլ 4. Գրանցման հայտ

Աշխատանքի ընդունմանը՝ պայմանագրի կնքմանը (աշխատանքի ընդունման մասին հրամանի ընդունմանը) հաջորդում է առցանց հարթակում՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ նաև հարկային մարմին)՝

6

Անհատական իրավական ակտով՝ հրաման/ կարգադրություն և այլն, աշխատանքի ընդունելիս կիրառվում են նույն կանոնները, ինչպես նախատեսված է՝ «Աշխատանքային պայմանագիր» մասում:

7

Փորձաշրջան չի կարող նախատեսվել 18 տարին չլրացած անձանց հետ պայմանագիր կնքելիս:

www.taxservice.am կայքի միջոցով, էլեկտրոնային եղանակով, աշխատանքի ընդունման գրանցման հայտ ներկայացնելը: Նպատակն է հարկային մարմնին ֆիզիկական անձանց աշխատանքի վերաբերյալ ամփոփ տեղեկությունների ներկայացումը, որի միջոցով հարկային մարմինը վերահսկողություն է իրականացնում աշխատողներին վճարված եկամուտներից գանձվող հարկերի, այլ պարտադիր վճարների, ներառյալ կենսաթոշակի համար կարևոր նշանակություն ունեցող սոցիալական վճարի, աշխատողի ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստների նկատմամբ: Գրանցման հայտի համարը վերը նշված կայքի՝ կազմակերպության պրոֆիլում ներկայացված հաշվետվությունների տեսակների ցանկում 79-րդ ձևն է՝

79. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏ՝ Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների

Գրանցման հայտում նշվում է աշխատակցի անուն, ազգանուն, հայրանունը, անձնագրային տվյալները, պաշտոնը, աշխատաժամանակի տևողությունը, աշխատանքը սկսելու ամիս, ամսաթիվ, տարեթիվը: **Գրանցման հայտը պետք է ներկայացվի մինչև աշխատանքը սկսելու օրվա ժամը 14:00-ն:**

2. Առանձնահատկություններ

1. Օտարերկրացիների աշխատանք.

ՀՀ գործատուները, տվյալ դեպքում ջերմոցային տնտեսություն վարող գործատու ՍՊԸ-ն և ԱԶ-ը (այսուհետ՝ նաև ջերմոցատեր), իրավունք ունեն օտարերկրացի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր (աշխատանքների կատարման քաղաքացիաիրավական պայմանագիր) կնքելու և նրա աշխատանքն օգտագործելու՝ ՀՀ պետական լիազոր մարմնի կողմից օտարերկրացի աշխատողի համար տրամադրված **աշխատանքի թույլտվության հիման վրա**:



Սույն Ուղեցույցի պատրաստման պահի դրությամբ պետական լիազորված մարմինը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է: Նախարարությունը ջերմոցատիրոջ դիմումի հիման վրա օտարերկրացի աշխատողի համար աշխատանքի թույլտվություն տրամադրելիս հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկայի կարիքները և զարգացումները:

Օրինակ՝ եթե ջերմոցատերը ցանկանա աշխատանքային պայմանագիր կնքել Հնդկաստանի քաղաքացու հետ, ապա ընթացակարգը հետևյալն է՝



Դիմում ներկայացնել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ տեղեկացնելով, որ ունի ազատ աշխատատեղ և ներկայացնելով այդ աշխատատեղի նկարագիրը:

Նախարարությունը ուսումնասիրում է, թե ազատ

աշխատատեղին համապատասխան ՀՀ գործազուրկ և աշխատանք փնտրող քաղաքացիներ կան, թե ոչ: Ուսումնասիրությունը կատարվում է գործազուրկների տվյալների պետական բազաների միջոցով: Եթե այդ բազայում գրանցված են նման աշխատատեղ փնտրող տեղացի/ՀՀ քաղաքացի անձինք, ապա նախարարությունը նրանց ուղղորդում է դեպի ջերմոցատերը՝ հարցազրույց անցնելու համար: Եթե չեն գտնվում նման գործազուրկ մարդիկ կամ ջերմոցատերը՝ եղածների հետ հարցազրույցի արդյունքում պատճառաբանված որոշում է կայացնում մերժել նրանց աշխատանքի վերցնելը, ապա անցում է կատարվում հաջորդ քայլին՝ օտարերկրացու համար աշխատանքի թույլտվություն ստանալու նպատակով նախարարություն դիմելուն:

Նախարարությունը տեղեկացնում է գործատուին իր բազայում համապատասխան թեկնածուների բացակայության մասին:



Դիմում ներկայացնել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ տեղեկացնելով, որ ունի ազատ աշխատատեղ և ներկայացնելով այդ աշխատատեղի նկարագիրը:

Նախարարությունը ուսումնասիրում է, թե ազատ աշխատատեղին համապատասխան ՀՀ գործազուրկ և աշխատանք փնտրող քաղաքացիներ կան, թե ոչ: Ուսումնասիրությունը կատարվում է գործազուրկների տվյալների պետական բազաների միջոցով: Եթե այդ բազայում գրանցված են նման աշխատատեղ փնտրող տեղացի/ՀՀ քաղաքացի անձինք, ապա նախարարությունը նրանց ուղղորդում է դեպի ջերմոցատերը՝ հարցազրույց անցնելու համար: Եթե չեն գտնվում նման գործազուրկ մարդիկ կամ ջերմոցատերը՝ եղածների հետ հարցազրույցի արդյունքում պատճառաբանված որոշում է կայացնում մերժել նրանց աշխատանքի վերցնելը, ապա անցում է կատարվում հաջորդ քայլին՝ օտարերկրացու համար աշխատանքի թույլտվություն ստանալու նպատակով նախարարություն դիմելուն:

Նախարարությունը տեղեկացնում է գործատուին իր բազայում համապատասխան թեկնածուների բացակայության մասին: Գործատուն նախարարություն է ներկայացնում Հնդկաստանի քաղաքացուն աշխատանքային թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (անձնագիր, կրթության հավաստագիր՝ ըստ անհրաժեշտության):

Միայն համապատասխան թույլտվության ստանալու պահից

սկսած կարելի է օտարերկրացու հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Թույլտվությունը տրամադրվում է գործատուին:

2. Քաղաքացիաիրավական պայմանագրեր

Հայաստանյան պրակտիկայում կիրառվող այլընտրանքային տարբերակ՝ ֆիզիկական անձի աշխատուժն օգտագործելու համար. աշխատանքների կատարման քաղաքացիաիրավական պայմանագրեր



Պարկտիկայում լայն տարածում ունի ֆիզիկական անձանց հետ աշխատանքների կատարման քաղաքացիաիրավական պայմանագրի կնքումը:

Ընդունված է քաղաքացիաիրավական պայմանագիրն համարել առավել պրակտիկ և պակաս ծախսատար: Այդ տեսակի Պայմանագրի բովանդակությանը վերաբերող հստակ կանոններ նախատեսված չեն ՀՀ գործող օրենսդրությամբ: Այնուամենայնիվ, այդպիսի պայմանագիրը առնվազն պետք է պարունակի.

պայմանագրի կողմերին՝ տվյալ դեպքում ջերմոցային տնտեսություն հանդիսացող ՍՊԸ-ին և ֆիզիկական անձին վերաբերող անհատականացնող տվյալներ, աշխատանքների նկարագիրը.

ինչ աշխատանք է կատարելու ֆիզանձը, աշխատանքի համար նախատեսվող վճարի չափը, ձևը, վճարման կարգը. պրակտիկայում ջերմոցային տնտեսություններում, որպես կանոն, հիմնական վճարման ձևը՝ ջերմոցում անմիջականորեն բույսի աճեցման, խնամքի, բերքը հավաքելու և նմանատիպ աշխատանքների համար, օրավարձն է: Իհարկե, դա չի սահմանափակում այս տեսակի պայմանագրի դեպքում կիրառել ամսական կամ այլ պարբերականությամբ վճարման կարգ, աշխատանքի կատարման ժամկետներ, այլ պայմաններ:

3. Աշխատանքի այլ առանձնահատկություններ.

Հաշվի առնելով ջերմոցային տնտեսությունում աշխատանքի բնույթը՝ պրակտիկայում և տեսականորեն որոշակի դեպքերում այդ աշխատանքները կարող են ունենալ առանձնակի բնույթ, օրինակ, լինել վնասակար և այլն: Բուսաբուծության բնագավառում, մասնավորապես, հետևյալ աշխատանքներ կատարող անձանց համար այդպիսի աշխատանքներն համարվում են ծանր, վնասակար.



Թունանյութերով մշակված հողակտորներում հետազոտություններ և դիտարկումներ իրականացնող աշխատողներ

Գյուղատնտեսական մթերքների մեջ թունանյութերի մնացորդային քանակի փորձաքննություն իրականացնող աշխատողներ

Գյուղատնտեսական մթերքների մեջ նիտրատների և այլ էլեմենտների փորձաքննություն իրականացնող աշխատողներ

Գյուղատնտեսական մշակաբույսերի վրա գիտական նպատակներով բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների փորձարկում իրականացնողներ

Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների (թունանյութեր) պահպանում և վաճառք իրականացնողներ

Անհրաժեշտ է հիշել, որ ծանր, վնասակար աշխատանքներ կատարողների համար ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսվում են որոշակի աշխատանքային արտոնություններ, ինչպես, օրինակ, իրումն աշխատավարձի հավելման վճարում, լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում և այլն:

Միաժամանակ, օրենքն արգելում է որոշակի կատեգորիայի անձանց՝ մինչև 18 տարեկաններ, հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամողներ, ներգրավել այդպիսի աշխատանքներում:

ՋԵՐՄԱՏԱՆ ՀԻՄՆՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿ ՆԵՐԱՌՅԱԼ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԸ, ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Սույն գործարար ծրագրով նախատեսվում է հիմնել 1000 քմ մակերեսով ջերմատուն և հիդրոպոնիկ եղանակով աճեցնել մանրապտուղ լոլիկ: Ջերմատանն առկա են ավտոմատ կառավարման, ինչպես նաև բույսերի կաթիլային ոռոգումը ապահովող համակարգեր:

Ստորև հողումով կարող եք բեռնել գործարար ծրագիրը և ֆինանսական մոդելը.

<https://drive.google.com/file/d/12xZUMzYpE0WMibpNEqWCKYHoifezQaeh/view?usp=sharing>

Օգտագործած տեղեկատվական աղբյուրների ցանկը

1. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցումը	
Անվանում/Տեսակ	Հղում
Կայքեր	
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայք	www.e-register.am
Էլեկտրոնային ստորագրություն ձեռքբերելու և էլեկտրոնային ստորագրություն կիրառելու կարգ	www.ekeng.am
Ընկերությունների գրանցման փաստաթղթերի ձևեր	https://www.e-register.am/am/docs/18
Իրական շահառուի վերաբերյալ հայտարարություն	https://www.e-register.am/am/docs/315
Իրավական ակտեր	
ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք	ՀՕ-239, ընդունված՝ 05.05.1998, ուժի մեջ է մտել՝ 01.01.1999թ.-ին
«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք	ՀՕ-169, ընդունված՝ 03.04.2001թ., ուժի մեջ է՝ 18.08.2001թ.
«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք	ՀՕ-186, ընդունված՝ 27.12.1997թ., ուժի մեջ է՝ 11.01.1998թ.
«Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմինն ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը, հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշում	Թիվ 20-Ն, Ընդունվել է՝ 27.01.2009թ., ուժի մեջ է՝ 12.03.2009թ.
«ՀՀ տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» հաստատելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի N372-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ էկոնոմիկային նախարարի հրաման	N 874-Ն, Ընդունված՝ 19.09.2013., ուժի մեջ է՝ 14.11.2013թ.

2. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշվի բացում և հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում գրանցում	
Անվանում/Տեսակ	Հղում
Կայքեր	
Պետական կոմիտեի եկամուտների կայք	https://file-online.taxservice.am/
Հարկ վճարողների սպասարկման վարչության ստորաբաժանումների ցանկ	https://www.petekamutner.am/asStructuralUnits.aspx?itn=as-Departments&suid=863
Իրավական ակտեր	
ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք	ՀՕ-239, ընդունված՝ 05.05.1998, ուժի մեջ է մտել՝ 01.01.1999թ.-ին
«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք	ՀՕ -252, ընդունված՝ 24.11.2001թ., ուժի մեջ է՝ 07.12.2001թ.
«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենք	ՀՕ-167, ընդունված՝ 03.04.2001թ., ուժի մեջ է՝ 02.05.2001թ.
ՀՀ Հարկային օրենսգիրք	ՀՕ - 165-Ն , ընդունված՝ 04.10.2016թ., ուժի մեջ է՝ 01.01.18թ.

3. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար գործող հարկերը և դրանց վճարման կարգը	
Անվանում/Տեսակ	Հղում
Կայքեր	
Պետական կոմիտեի եկամուտների կայք	https://file-online.taxservice.am/
Իրավական ակտեր	
ՀՀ Հարկային օրենսգիրք	ՀՕ – 165-Ն , ընդունված՝ 04.10.2016թ., ուժի մեջ է՝ 01.01.18թ.
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՎՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 298-Ն, ընդունված՝ 30.12.2016թ., ուժի մեջ է՝ 01.01.2018թ.
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 299-Ն, ընդունված՝ 30.12.2016թ., ուժի մեջ է՝ 01.01.2018թ.

3. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար գործող հարկերը և դրանց վճարման կարգը	
Անվանում/Տեսակ	Հղում
Իրավական ակտեր	
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ (ՊԱՐԶԵՑՎԱԾ), ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 300-Ն, ընդունված՝ 30.12.2016թ., ուժի մեջ է՝ 01.01.2018թ
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԵՎ ՆՈՏԱՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 749-Ն, ընդունված՝ 12.12.2018թ., ուժի մեջ է՝ 27.12.2018թ
ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԶՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԵՎ ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 558-Ն, ընդունված՝ 27.08.2019թ., ուժի մեջ է՝ 01.01.2020թ
ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 178-Ն, ընդունված՝ 17.03.2018թ., ուժի մեջ է՝ 13.04.2018թ

4. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ջերմոցային տնտեսության հարկային ռեժիմների ուսումնասիրությունը և դրույքաչափեր	
Անվանում/Տեսակ	Հղում
Իրավական ակտեր	
ՀՀ Հարկային օրենսգիրք	ՀՕ – 165-Ն , ընդունված՝ 04.10.2016թ., ուժի մեջ է՝ 01.01.18թ.

5. Հայաստանի Հանրապետությունում ջերմոցային տնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ընտրված հարկային ռեժիմների վերաբերյալ հարկային մարմինն հայտարարություն ներկայացնելը	
Անվանում/Տեսակ	Հղում
Կայքեր	
Պետական կոմիտեի եկամուտների կայք	https://file-online.taxservice.am/
Իրավական ակտեր	
ՀՀ Հարկային օրենսգիրք	ՀՕ – 165-Ն , ընդունված՝ 04.10.2016թ., ուժի մեջ է՝ 01.01.18թ.
ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՆՐԱՊԵՏԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԵՎ ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՑՄԱՆ ԾՐՋԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 558-Ն, ընդունված՝ 27.08.2019թ., ուժի մեջ է՝ 01.01.2020թ
ԾՐՋԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 191-Ն, ընդունված՝ 27.06.2017թ., ուժի մեջ է՝ 01.01.2018թ
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՈՐՊԵՍ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՂ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման 190-Ն, ընդունված՝ 27.06.2017թ., ուժի մեջ է՝ 01.01.2018թ

6. Հայաստանի Հանրապետությունում ջերմոցային տնտեսություն կառուցելու համար անհրաժեշտ շինարարական թույլտվությունը	
7. Թույլտվություն ձեռք բերելու ընթացակարգը քայլ առ քայլ՝ ներառյալ ժամկետներն ու վճարները, թույլտվություն տրամադրող իրավասու մարմինը	
8. Հայաստանի Հանրապետությունում ջերմոցային տնտեսություն կառուցելու համար անհրաժեշտ լիցենզիաներ	
9. Լիցենզիա ձեռք բերելու ընթացակարգը քայլ առ քայլ՝ ներառյալ ժամկետներն ու վճարները, թույլտվություն տրամադրող իրավասու մարմինը	
Անվանում/Տեսակ	Հղում
Կայքեր	
Հայաստանի Հանրապետության Կառավարության էլեկտրոնային կառավարման կայք	www.e-gov.am
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կայք	www.minurban.am

6. Հայաստանի Հանրապետությունում ջերմոցային տնտեսություն կառուցելու համար անհրաժեշտ շինարարական թույլտվությունը
7. Թույլտվություն ձեռք բերելու ընթացակարգը քայլ առ քայլ՝ ներառյալ ժամկետներն ու վճարները, թույլտվություն տրամադրող իրավասու մարմինը
8. Հայաստանի Հանրապետությունում ջերմոցային տնտեսություն կառուցելու համար անհրաժեշտ լիցենզիաներ
9. Լիցենզիա ձեռք բերելու ընթացակարգը քայլ առ քայլ՝ ներառյալ ժամկետներն ու վճարները, թույլտվություն տրամադրող իրավասու մարմինը

Անվանում/Տեսակ	Հղում
Իրավական ակտեր	
Հողային օրենսգիրք	ՀՕ-185, ընդունված՝ 02.05.2001թ.-ին, ուժի մեջ է մտել՝ 15.06.2001թ.-ին
«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք	ՀՕ-217, ընդունված՝ 05.05.1998թ.-ին, ուժի մեջ է մտել՝ 09.06.1998թ.-ին
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք	ՀՕ-41-Ն, ընդունված՝ 18.02.2004թ., ուժի մեջ է մտել՝ 31.12.2004թ.
«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք	ՀՕ-186, ընդունված՝ 27.12.1997թ., ուժի մեջ է մտել՝ 11.01.1998թ.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք	ՀՕ-185, ընդունված՝ 26.12.1997թ., ուժի մեջ է մտել՝ 11.01.1998թ.
«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք	ՀՕ-193, ընդունված՝ 30.05.2001թ., ուժի մեջ է մտել՝ 08.08.2001թ.
ՀՀ կառավարության «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշում	N 596-Ն, ընդունված՝ 19.03.2015թ., ուժի մեջ է մտել՝ 27.06.2015թ.
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. N273-Ն հրամանն ուժը կորցնելու մասին» N 128-Ն հրաման	N 128-Ն, ընդունված՝ 11.09.2017թ., ուժի մեջ է մտել՝ 12.10.2017թ.
Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	N 777-Ն, ընդունված՝ 02.07.2009թ., ուժի մեջ մտած՝ 01.08.2009թ.

10. Աշխատանքային հարաբերությունները ջերմոցային տնտեսությունների համար	
Անվանում/Տեսակ	Հղում
Կայքեր	
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կայք	www.petekamutner.am
Իրավական ակտեր	
ՀՀ աշխատանքային օրենսգիրք	ՀՕ-124-Ն, Ընդունված է՝ 09.11.2004, Ուժի մեջ է՝ 21.06.2005
ՀՀ հարկային օրենսգիրք	ՀՕ-165-Ն, Ընդունված է՝ 04.10.2016, Ուժի մեջ է՝ 01.01.2018
«Եկամտային հարկի եվ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենք	ՀՕ-247-Ն, Ընդունված է՝ 22.12.2010, Ուժի մեջ է՝ 01.01.2013
«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք	ՀՕ-47-Ն, Ընդունված է՝ 25.12.2006, Ուժի մեջ է՝ 03.02.2007
ՀՀ կառավարության որոշումը «Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու եվ մերժելու կարգը եվ ժամկետները, համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը եվ չափերը, օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի եվ բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության հայաստանի հանրապետությունում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկերը սահմանելու մասին»	N 493-Ն, Ընդունված է՝ 12.05.2016, Ուժի մեջ է՝ 04.06.2016
ՀՀ կառավարության որոշումը «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) եվ պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր զննության, եվ բժշկական զննության ծավալի ու հաճախականության ցանկը, անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշման ձեվերը հաստատելու մասին	N 347-Ն, Ընդունված է՝ 27.03.2003, Ուժի մեջ է՝ 03.05.2003

10. Աշխատանքային հարաբերությունները ջերմոցային տնտեսությունների համար

Անվանում/Տեսակ	Հղում
Իրավական ակտեր	
ՀՀ կառավարության որոշումը «Ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների եվ պաշտոնների, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների եվ պաշտոնների ցանկերը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի n 1599-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու, հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի n 876-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու եվ հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»	N 1698-Ն, Ընդունված է՝ 02.12.2010, Ուժի մեջ է՝ 03.01.2011

STRENGTHENING ARMENIA'S BUSINESS ENVIRONMENT

